ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 29 (1529) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 20, 2011
VOLUME 31, NO. 29 (1529) SATURDAY, AUGUST 20, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ ԱՌԱՋ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

*Դարեր ամբողջ մեր ժողովուրդը ունեցած է – ընդհանրապէս ճակատագրականութեամբ սահմանուող – իր գոյութեան պահպանման անդուլ, այլապէս մշտանորոգ պայքարը, ընդդէմ՝ օտար այն բոլոր աշխարհակալ ուժերուն, որոնք անդադրում ասպատակած են իր հայրենիքը աշխարհակալական, քաղաքական եւ կրօնական բազմապիսի պատճառներով: Գոյակռիւ ծաւալած է նաեւ, ինչու՞ չէ, իրենց տիրակալական աշխարհաքաղաքական վէճերը լուծելու համար Հայաստանը կռուախնձորի վերածած հռովմէական, բիւզանդական, պարսկական, արաբական եւ օսմանեան հզօր կայսրութիւններուն դէմ:*

*Որքան ալ ծանր, կործանարար, մահացու եղած են թշնամի գրոհները, անոնց պատճառած վէրքերը, հայը միշտ – հրաշքի համազօր – հաստատ մնացած է իր ոտքերուն վրայ, շնորհիւ, տակաւ զօրացող իր հոգեկան արիութեան: Ան, ուժգին փարած մնացած է իր ազգային երազներուն, հաւատամքներուն: Չէ տկարացած: Չէ յուսահատած: Ընդհակառակը՝ վերականգնած է իր աւերակները: Ամոքած է իր ցաւերը: Դարմանած է իր խորունկ վէրքերը: Վերակազմակերպած է իր հաւաքական կեանքը: Բացած է նոր դպրոցներ հայրենիքով մէկ: Կառուցած է նոր եկեղեցիներ: Ուժգին նուիրուած է իր ազգային մշակոյթին, պատմութեան, գիր ու գրականութեան, փորձառական իմաստութեամբ անոնց մէջ գտնելով իր հաւաքական կեանքի գոյութեան պահպանման, ամրապնդման եւ բարգաւաճման կարելիութիւնները: Ուստի, ան տէր է կանգնած իր ազգային դարաւոր ժառանգութիւններուն, ժողովրդական աւանդութիւններուն, որոնք պարզապէս կը պահպանեն իր ազգային ինքնատիպ յատկութիւնները, կը մասնաւորեն զինք ուրիշներէն, հեռու կը պահեն զինք օտարամուտ բարքերէն, բարքեր՝ որոնք անտարակոյս, կը փորձեն այլասերել իր ազգային դիմագիծը, ճամբայ հարթելով այլասերումի առջեւ:*

*Այս բոլորը կարելի կը դառնան շնորհիւ մեր ժողովուրդի ունեցած բնածին իմաստութեան: Իմաստութիւն մը, որ ծնունդ տուած է անոր, իբրեւ ազգ եւ հայրենիք՝ գոյութեան պահպանման ռազմավարութեան մը, որուն հիմնական զէնքերը –ինչպէս նախապէս դիտել տուինք– հանդիսացած*

Շար.ը էջ 18

# ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԷ ՁԵՌՆՊԱՀ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ ԱՒԱՐՏԵՑԱՒ ՀԱԿ-ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ 5ՐԴ ՓՈՒԼԸ



Դաւիթ Յարութիւնեան եւ Լեւոն Զուրաբեան

*Երեքշաբթի, Օգոստոս 16-ին տեղի ունեցաւ Հայաստանի իշխանութիւններու եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Գոնկրէսի (ՀԱԿ) միջեւ ընթացող երկխօսութեան 5-րդ փուլը: Երկու կողմերու ներկայացուցիչներուն միջեւ կայացած հանդիպումը տեւեց մօտ երկու ժամ: Աւարտին՝ իշխանութեան եւ ՀԱԿ-ի պատուիրակութիւններու ղեկավարները՝ Դաւիթ Յարութիւնեան եւ Լեւոն Զուրաբեան լրագրողներուն յայտնեցին, որ իրենք որոշած են հանդէս գալ համատեղ հաղորդագրութեամբ:*

*«Քննարկուեց Օգոստոսի 9-ին Հայ Ազգային կոնգրէսի ակտիւիստների եւ ոստիկանութեան աշխատակիցների միջեւ տեղի ունեցած միջադէպը, պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել շարունակել քննարկումը Ուրբաթ օրը, նաեւ պայմանաւորւում ենք առայժմ ձեռնպահ մնալ միջադէպի քննարկման մանրամասների մասին մեկնաբանութիւն տալուց: Շնորհակալութիւն, մենք նաեւ պայմանաւորուել ենք որեւէ հարցի չպատասխանել»,- ըսուած էր Զուրաբեանի կողմէ ընթերցուած հաղորդագրութեան մէջ: Ապա, պատուիրակութիւնները հեռացան առանց պատասխանելու լրագրողներու հարցերուն:*

*Այսպիսով, ՀԱԿ-իշխանութիւն երկխօսութիւնը կ՚ունենայ շարունակութիւն, հակառակ ՀԱԿ-ի խօսնակ Արման Մուսինեանի օր մը առաջ կատարած այն յայտարարութեան, որ քաղբանտարկեալներու առկայութիւնը լուրջ խոչընդոտ է երկխօսութեան համար, եւ որ իշխանութեան հետ երկխօսութիւնը շարունակելու իրենց որոշումը կախուած է կալանաւոր-*

Շար.ը էջ 4

# «ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅՄԶ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ԴԱՍԷ «ՈՒՐՈՒԱԿԱՆ-ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ» ՇԱՐՔԻՆ

*Աբխազիայի եւ Հարաւային Օսէթիայի կողմէ անկախութեան հռչակման երրորդ տարեդարձին առնչութեամբ «Նիւ Եորք Թայմզ» յօդուած մը հրապարակած է «ուրուական-պետութիւններու» գոյութեան վտանգի մասին:*

*«Այդպիսի պետութիւնները ունին սեփական բանակ, կ՚իրականացնեն ընտրութիւններ, կը զարգացնեն իրենց տնտեսութիւնները եւ երեխաներ կը դաստիարակեն, սակայն կը գտնուին փաստացի գոյութեան եւ իրենց օրինականացման միջազգային ընդունման միջեւ», կը գրէ հեղինակաւոր թերթը:*

*«Աշխարհի մէջ գոյութիւն ունի այդպիսի չճանաչուած 12 միաւոր, ուր ընդհանուր առմամբ կը բնակի 40 միլիոն մարդ: Նախկին Սովետական Միութեան տարածքին անոնք են՝ Մերձտնեստրը, Լեռնային Ղարաբաղը, Եւրոպայի մէջ՝ Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութիւնը, Մերձաւոր Արեւելքի մէջ՝ Պաղեստինը, Աֆրիկէի մէջ՝ Սոմալիլենտը եւ այլն»:*

*«Ուրուականներու» մեծ մասը կը գոյատեւէ արտաքին աջակցութեան շնորհիւ: Այսպէս, պաշտօնական Մոսկուան Հարաւային Օսէթիայի եւ Աբխազիայի «զօրչ քարտինալն» է, իսկ Հայաստանը՝ Լեռնային Ղարաբաղինը»,- կը գրէ թերթը:*

*«Նմանատիպ պետութիւններու իշխանութիւնները՝ իբրեւ կանոն ադաւադրուած են, անոնք կը ղեկավարուին ռազմական հրամանատարներու կողմէ, որոնք կը*

Շար.ը էջ 18

# ԹՐՔԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒ ԴԷՄ ԲԱՑՈՒԱԾ ԴԱՏՈՎ՝ ԱՌԱՋԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԵՐՈՒ

*Լոս Անճելըսի մէջ գործող Միացեալ Նահանգներու Դաշնակցային Դատարանը կայացուց իր առաջին նախնական որոշումը՝ ի նպաստ հայազգի հայցուորներու, որոնք հատուցում կը պահանջեն, Թուրքիոյ կողմէ գրաւուած իրենց կալուածներուն համար:*

*Դատարանը իր առաջին որոշումով եկաւ հաստատելու, որ բողոքագիրերը օրինաւոր կերպով յանձնուած են ամբաստանուող կողմերուն:*

*Դատը որ բացուած է Հայկական Ցեղասպանութեան զոհերու իրաւայաջորդներուն կողմէ, կը մեղադրէ ամբաստանեալներուն, իրենց հողերը գողնալու եւ ապա ապօրէն կերպով անոնցմէ եկած եկամուտները իւրացնելու մէջ: Խնդրոյ առարկայ կալուածները կը գտնուին հարաւային Թուրքիոյ Ատանայի շրջանին մէջ, ուր ներկայիս հաստատուած է Ամերիկեան «Ինճիրլիք» օդային ռազմակայանը:*

*Հայցուոր կողմը ամիսներով փորձած է դատական բողոքագիրը յանձնել Թրքական Կեդրոնական դրամատան եւ «Զիրաաթ» դրա-*

Շար.ը էջ 4

# ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇԱՆԱԿԱԾ Է ԵՐԿՈՒ ԴԵՍՊԱՆ ՄԻԱՏԵՂ

*Մեծն Բրիտանիոյ կառավարութիւնը Հայաստանի Հանրապետութեան մօտ նշանակած է երկու դեսպան: Ամուսնացած զոյգ՝ Ճոնաթան Ճէյմս Էյվս եւ Քեթրին Ճէյն Լիչ նշանակուած են միատեղ դեսպաններ՝ յաջորդելով Զարլզ Ճոն Լոնստէյլին, որ կ՚անցնի դիւանագիտական մէկ այլ աշխատանքի:*

*Նոր դեսպանները կը ստանձնեն իրենց պաշտօնը 2012 Թուականի Յունուարին: Անոնց մնայուն նստավայրը կը դառնայ Երեւանը, իսկ դեսպանի պաշտօնը անոնք կը կատարեն 4-ամսեայ հերթականութեամբ:*

*Դեսպանատան մամուլի ծառայութիւնը NEWS.am-ին յայտնած է, որ Ճոնաթան Էյվս ներկայիս կ՚աշխատի Արտաքին Գործերու Նախարարութեան մօտ սկսեալ 1996 Թուականէն, իսկ Քեթրին Լիչ՝ 2000-էն: Նախապէս անոնք աշխատած են գիտական ասպարէզի մէջ եւ հասարակական կարծիքի հետազօտման ոլորտի մէջ:*

*Անոնք ունին երկարամեայ*

Շար.ը էջ 4

# ՆՊԱՍՏԵՆՔ ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ

*ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ*

Ատրպէյճանական քարոզչամեքենան արցախեան հիմնախնդրի բանակցային գործընթացի սկզբից շրջանառութեան մէջ դրեց այնպիսի քաղաքական տերմիններ, որոնք, անշուշտ, միտուած են սեփական քաղաքականութեան ամրապնդմանը: Մինչդեռ հայկական կողմը գործընթացին ներկայացաւ անփոյթ ու անպատրաստ, շատ դէպքերում կուլ տալով ատրպէյճանական խայծն ու կրկնելով վերջինիս շրջանառած ատրպէյճանանպաստ եզրոյթները. «գրաւեալ տարածքներ», «Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքներ», «Լեռնային Ղարաբաղի վերահսկողութեան ներքոյ գտնուող տարածքներ» եւ այլն: Մտահոգիչ է, որ տերմինաբանական այդ «խառնաշփոթը» շարունակւում է առ այսօր:

**ԱՅԴ ՉԱՐԱԲԱՍՏԻԿ «ԳՐԱՒԵԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ»**

Արցախի մերօրեայ տարածքների մասին պատկերացումը շարունակւում է մինչ օրս մնալ աղճատուած: 1993-ից մոգոնուեց չարաբաստիկ «գրաւեալ տարածքներ» եզրոյթը, որը ո՛չ պատմականօրէն, ո՛չ իրաւական առումով չի արտացոլում իրականութիւնը:

1997-ից սկսեալ հայաստանեան լրատուամիջոցներին, քաղաքական շրջանակներին մասամբ յաջողուեց ձերբազատուել ատրպէյճանպաստ եզրոյթից, - «գրաւեալը» փոխարինուեց «ազատագրուածով»: Սակայն, եթէ ներհայաստանեան քաղաքական շրջանակների կողմից այս սխալը սրբագրուեց, ապա այլ է պատկերը արտաքին դաշտում: «Ատրպէյճանական գրաւեալ տարածքներ» ձեւակերպումը այդպէս էլ դուրս չի մղւում միջազգային կազմակերպութիւնների փաստաթղթերից: Ինչպէս նկատում է պրոֆեսոր Ալեքսանդր Մանասեանը, իրականում «գրաւեալ տարածք» հասկացութիւնը պէտք է օգտագործի հայկական կողմը, իսկ միջազգային հանրութիւնը պէտք է քննարկի, թէ Ատրպէյճանը երբ պէտք է ազատի իր կողմից գրաւուած հայկական տարածքները, մինչդեռ այսօր հակառակ իրավիճակն է:

**ժամանակն է մեր քաղաքական բառապաշարը մաքրելու կեղծ ու ոչ հայանպաստ եզրոյթներից**

Ի դէպ, վերջին շրջանում հայ դիւանագիտութիւնը, չնայած ուշացումով, բայց, ի վերջոյ, սկսեց շրջանառել «ԼՂՀ գրաւեալ տարածքներ» եզրոյթը: ԼՂՀ գրաւեալ տարածքներ են ներկայումս ատրպէյճանական ուժերի կողմից վերահսկուող ԼՂՀ Շահումեանի շրջանի հիւսիսային հատուածը, որի տէրերը 1992 թ. ողբերգական դէպքերի պատճառով դարձան փախստականներ:

Այն տարածքները, որոնք անուանւում են «ԼՂՀ-ին յարակից» կամ «անվտանգութեան գօտի», Արցախի Հանրապետութեան Սահմանադրութեամբ եւս հռչակուած են որպէս երկրի անբաժանելի մասեր: Սահմանադրութեան 142-րդ յօդուածը տալիս է հարցի յստակ պատասխանը. «Մինչեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական տարածքի ամբողջականութեան վերականգնումը եւ սահմանների ճշգրտումը՝ հանրային իշխանութիւնն իրականացւում է այն տարածքում, որը փաստացի գտնւում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իրաւազօրութեան ներքոյ»: Այսպիսով, ազատագրուած շրջանները մեր ամբողջական հայրենիքի անբաժան մասն են, եւ ոչ թէ «գրաւեալ են», այլ ազատագրուած:

**ՈՉ ԹԷ ԼՂ, ԱՅԼ ԼՂՀ**

Հայաստանեան քաղաքական շրջանակները յաճախ են օգտագործում «Լեռնային Ղարաբաղ» թերի եզրոյթը: Սակայն «Հանրապետութիւն» բառի «սրբագրումը» ոչ միայն պետութեան անուան ակնյայտ աղաւաղում է, ԼՂՀ Սահմանադրութեան կոպիտ խախտում, այլեւ լուրջ բացթողում իրաւաքաղաքական տեսանկիւնից, քանզի կարող է ընկալուել, թէ Հայաստանի Հանրապետութիւնը ԼՂՀ-ն ոչ թէ պետական միաւոր է ճանաչում, այլ ընդամէնը տարածք:

Դարձեալ դիմենք ԼՂՀ հիմնական օրէնքին. Սահմանադրութեան 1-ին յօդուածի 1-ին կէտով արձանագրւում է. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնն ինքնիշխան, ժողովրդավարական, իրաւական, սոցիալական պետութիւն է»: Իսկ 2-րդ կէտն ամրագրում է. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն եւ Արցախի Հանրապետութիւն անուանումները նոյնական են»: Քաղաքական գործիչները պարտաւոր են յարգել ԼՂՀ Սահմանադրութիւնը:

**ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻՆ ԱԶԵՐԻ ՉԷ**

Շարունակւում է, այսպէս կոչուած, «ատրպէյճանցի ազգի» ձեւաւորումը: Իսկ չձեւաւորուած «ազգը», որ սեփական ինքնութիւնը հաստատելու լուրջ խնդիր ունի, փնտռտուքի մէջ է. դա է պատճառը, որ ատրպէյճանցին մէկ իրեն կովկասեան թաթար կամ կովկասեան թուրք է համարում, մէկ էլ թէ՝ ո՛չ թուրք ենք, ո՛չ մահմեդական, քրիստոնեայ աղուան ենք կամ էլ ազերի: Հայերս, պարզւում է, այս հարցում նոյնիսկ օգնում ենք քոչուորին. գիտակցո՞ւմ ենք, արդեօք, որ ամէն անգամ, երբ «ատրպէյճանցի թուրքին» «ազերի» ենք կոչում, ակամայ հաստատում ենք բունիաթովների յօրինած կեղծիքը, թէ իրենք տարածաշրջանի բնիկ ժողովուրդներից են՝ «հազարամեայ պատմութեամբ»: «Մենք շարունակում ենք կրկնել մեր սխալները. թուրքին ասել ենք ատրպէյճանցի, հիմա էլ ասում ենք ազերի: Մենք անփոյթ ենք մեր կողմից օգտագործուող բառապաշարի նկատմամբ: Ինչո՞ւ մինչ օրս քաղաքական, հասարակական գործիչներին, լրագրողներին չի ասւում, թէ որ բառը ինչպէ՞ս, որտե՞ղ, ե՞րբ օգտագործել»,- տեղին դժգոհում է պրոֆեսոր Մանասեանը, զգուշացնելով՝ քանի դեռ իրերը չենք կոչել իրենց ճշգրիտ անուններով, հնարաւոր չէ յաջողութիւն արձանագրել արցախեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացում:

Այնպէս որ, ժամանակն է մեր քաղաքական բառապաշարը մաքրելու կեղծ ու ոչ հայանպաստ եզրոյթներից, միաժամանակ շրջանառելով այնպիսիք, որոնք կը նպաստեն սեփական քաղաքականութեան ամրապնդմանն ու յաղթանակին:

*«ԻՐԱՒՈՒՆՔ ՏԷ ՖԱՔԹՕ»*

# «ՀԸ, ՏԵԼԵՎԻԶՈՐ, ԷՍՕՐ ԻՆՉ ԵՍ ԱՍԵԼՈՒ»

*ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ*

Հայկական հեռուստաընկերութիւնները, կարծես թէ կախարդական փայտիկի ցուցումով, սկսել են աւելի յաճախ «բացասական» ռեպորտաժներ հեռարձակել, որոնք նախկինում եթերում երազել անգամ հնարաւոր չէր: Վերջին շաբաթուայ ընթացքում հեռուստաընկերութիւնները Երեւանի կրպակների ապամոնտաժման կադրեր, կրապակատէրերի դժգոհ կարծիքներ են ցոյց տալիս, կադրեր, որոնցում ակնյայտ երեւում են Կոնգրեսի երիտասարդների նկատմամբ բռնութեան հետքեր եւ այլն: Սովորական հեռուստադիտողները զարմացած հարցնում են, թէ ինչ է եղել հեռուստանկերութիւններին եւ գուշակում են, թէ ում է դա ձեռնտու:

Հայկական հեռուստաընկերութիւնների լուրերը, ինչպէս ռուսականներինը, յիշեցնում են իշխանութեան գործունէութեան ժամանակագրութիւն՝ նախագահը գնաց այնտեղ, վարչապետը՝ այստեղ, իսկ նախարարները եւ այսպէս շարունակ: Այն, որ հեռուստաընկերութիւններին քչերն են վստահում, փաստում են նաեւ հեռուստաընկերութիւնները եւ սոցիոլոգիական հարցումները: Սակայն ո՞ւմ է պէտք հեռուստաընկերութիւնը, որին չեն վստահում: Դատելով ամէնից, իշխող էլիտան ներկայացնող հեռուստաընկերութեան տէրերը նոյնպէս իրենց տուել են այդ հարցը եւ հասկացել, որ հեռուստատեսութեամբ ասուած իրենց խօսքը դադարել է ազդել հասարակական կարծիքի վրայ:

Իսկ հասարակական կարծիքը վերջին ժամանակներս աւելի մեծ կարեւորութիւն է ստանում: Ընդդիմութիւնը պնդում է, որ եթէ փողոց դուրս գայ 100.000 մարդ, տեղի կ՚ունենայ իշխանափոխութիւն: Իշխանութիւնը, ամէնայն հաւանականութեամբ, նոյնպէս գիտի, որ ոչ ուժային ռեսուրսը եւ ոչ էլ դատարկախօսութիւնը չեն օգնի, այլ անհրաժեշտ կը լինեն որոշակի մարդիկ, որոնց հարկ կը լինի համոզել: Հայաստանում հեռուստատեսութիւնը քաղաքական ազդեցութեան լծակ է, եւ եթէ նախկինում այն այնքան էլ կարեւոր չէր, ապա այժմ իշխանութիւնը սկսել է մտածել, թէ ինչ արդիւնաւէտութեամբ կ՚աշխատի այն վճռորոշ պահերին:

Ողջ աշխարհում ԶԼՄ-երը աշխատում են յայտնի սկզբունքով՝ օբիեկտիւութիւնը եւ օպերատիւութիւնը վստահութիւն են առաջ բերում մաս-մեդիայի հանդէպ, որն անհրաժեշտ պահին կարելի կը լինի օգտագործել գործարար եւ քաղաքական նպատակներով: Ոչ մի ԶԼՄ, առաւել եւս հեռուստաընկերութիւն, որը չի վայելում հեռուստադիտողների վստահութիւնը, չի կարող քաղաքական խնդիրներ լուծել եւ ազդել հասարակական կարծիքի վրայ:

Իսկ վստահութիւն վայելող թերթը, որը խօսում է լսարանի անունից, այլ ոչ թէ ինչ-որ քաղաքական ուժի, կարող է յեղափոխութիւն իրականացնել: Եւ դա, թերեւս, հասկացել են հայ քաղաքական գործիչները, քանի որ հնարաւոր է, որ գալիք ընտրութիւններին հասարակական կարծիքը կարող է որոշիչ գործօն դառնալ: Որքան էլ տարօրինակ հնչի, դա կարող է հանգեցնել հեռուստատեսութեան առողջացմանը: Հեռուստաընկերութիւնների տէրերին աւելի շահեկան է իրենց համար մի քանի ոչ այնքան բարեհաճ հաղորդում ցուցադրել, դրա դիմաց օբիեկտիւ ալիքի անուն վաստակելով, որին դիտում ու վստահում են, որպէսզի անհրաժեշտ պահին դուրս գան սեփական հեռուստաընկերութեան էկրան եւ քաղաքական յայտարարութիւն անեն:

Հնարաւոր է, որ տեսնում ենք հեռուստատեսութեան «օբիեկտիւացման» ակտուալ գործընթացի ցօղունները, առանց որի երկրի բարեփոխումն անհնար է: Դեռեւս ոչ հրապարակային գործընթացների կողքին, որոնք սկսուել են դատական համակարգում՝ փաստաբանների, դատաւորների բողոքը, կարող է հանգեցնել այն բանին, որ երրորդ ու չորրորդ իշխանութիւնները կարող են հանդէս գալ որպէս առաջին եւ երկրորդ իշխանութիւնների բարեփոխման կատալիզատոր:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $120.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# Ի՞ՆՉ Է ԻՐԱԿԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ. ԸՍՏ ՀԱԿ-Ի

*Օգոստոսի 9-ին Հայ ազգային կոնգրէսի երիտասարդ ակտիւիստների եւ իրաւապահների միջեւ տեղի ունեցածի այն տարբերակը, որ տարածել էր ոստիկանութիւնը, սուտ է: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեանը:*

*«Ես կարծում եմ, որ ոստիկանապետին հերթական անգամ սխալ են զեկուցել: Գիտէք, նման դէպքեր մենք շատ ենք ունեցել»,- ասաց նա:*

*«Իրականում կարմիր բերետաւորները խուզարկելիս են եղել մի մարդու: Ոստիկանութիւնը, հասկանալով, որ դա հակաօրինական է, գործարկել է առանց դնչկալի շան տարբերակը: Երկու կարմիր բերետաւորներ խուզարկելիս են եղել մի մարդու, Արտակ Կարապետեանը առաջարկել է ներգրաւուել գործընթացում: Խօսակցութիւնն ընթացել է շատ բարեկիրթ, սակայն երբ մօտեցել է Տիգրան Առաքելեանը եւ բարեւել, ոստիկաններից մէկն ասել է. «Արա, ես սրան ճանաչում եմ, սա լեւոնական է»:*

*Այս պահից, ըստ Մուսինեանի, նրանց նկատմամբ հնչել են հայհոյական արտայայտութիւններ, կիրառուել է բռնութիւն: Միւս հինգ ակտիւիստները, որ զբօսնելիս են եղել Ազատութեան հրապարակում, երբ տեսել են ոստիկանութեան մեքենաների կուտակումը եւ կարմիր բերետաւորների՝ այդ կողմ վազելը, շտապել են տուեալ տարածք, եւ երբ նրանք տեղ են հասել, տեսել են՝ Տիգրան Առաքելեանն ընկած է գետին՝ մի ոտքը բարձրացրած, միւսները հարուածելիս են եղել նրան: Հինգ տղաները դիմել են կարմիր բերետաւորների հրամանատար Տէր-Պօղոսեանին, սակայն դա ոչ միայն արդիւնք չի տուել, այլեւ սկսուել է բռնութեան կիրառում հինգ երիտասարդների նկատմամբ: Դրան հետեւել է նրանց՝ ոստիկանութեան մեքենաներ նստեցնելն ու տանելը:*

*«Ոստիկանները, պինդ բռնելով նրանց ձեռնաշղթաներից, էդ պարագայում, գիտէք, դա ուժեղացնում է ցաւը եւ սահմանափակում գործողութիւնները, շարունակել են հարուածել»,- պատմեց Մուսինեանը:*

*Ըստ նրա՝ կարմիր բերետաւոր Տիգրան Աւետիսեանը երկու ձեռքով փորձել է խեղդել շղթայուած Տիգրան Առաքելեանին: Վարորդ ոստիկանը կանգնեցրել է մեքենան եւ փորձել հանդարտեցնել: Րոպէներ անց, սակայն, այդ ամէնը կրկնուել է, - ձեռքերը հետեւում կապած, սկսել է դիմադրել գլխով, որի հետեւանքով էլ եղել է ոստիկանապետի նշած գլխի հարուածը ոստիկանի քթին:*

*«Ծեծը եւ բռնութիւնը շարունակուել է նաեւ ոստիկանութիւնում: Դա երեւում է նաեւ բժշկուհու գրառումներից. մի քանիսի անուան կողքին գրուած է «ուղեղի ցնցում», ինչը, գիտէք, նշանակում է, որ մարդը պիտի հետազօտուի, իսկ մինչ այդ գոնէ անշարժեցուի»,- ասաց Մուսինեանը:*

# ՆԻԿՈՅԵԱՆԸ ՈՉ ԲՈԼՈՐ ՆԻՒԹԵՐՆ Է ՅԱՆՁՆԵԼ ՀՔԾ-ԻՆ

*Ազգային ժողովի փոխնախագահ, նախկինում Մարտի 1-ի գործով խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի նախագահ Սամուէլ Նիկոյեանը (ՀՀԿ) ոչ բոլոր լուսանկարներն է յանձնել յատուկ քննչական ծառայութեանը:*

*«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում հարցին, թէ ինչո՞ւ ՀՔԾ-ին չի տրամադրել այն լուսանկարը, որը ժամանակին իրեն էին փոխանցել Փաստահաւաք խմբի նախկին անդամներ Անդրանիկ Քոչարեանը եւ Սեդա Սաֆարեանը, Նիկոյեանը պատասխանեց. - «Այդ լուսանկարները բազմաթիւ անգամ թերթերում, մամուլում, բոլոր տեղերում եղել են: Եւ այդ լուսանկարը բոլորը տեսել են եւ տիրապետում են»:*

*Փաստահաւաք խմբի ընդդիմադիր անդամների պնդմամբ՝ իրենց փոխանցած լուսանկարը վկայում է, որ 2008 թուականի Մարտի 1-ին նախքան արտակարգ դրութիւն յայտարարելը՝ 16-ն անց 37-ին Երեւանի կենտրոնում զինուած խմբաւորում է եղել բանակային համազգեստով:*

*Հարցին, թէ պատրաստւում է հիմա այդ լուսանկարն ուղարկել ՀՔԾ, Նիկոյեանը արձագանքեց. - «Այնպիսի լուսանկար, որը Հատուկ քննչական ծառայութիւնը չի տեսել, ես նման լուսանկար չունեմ: Բոլոր լուսանկարները յատուկ քննչականը եւ ամբողջ հանրութիւնը, բոլորն էլ գիտեն: Եթէ որեւիցէ մէկը փորձի ասել, որ այնտեղ կայ լուսանկարը, որը էական փոփոխութիւններ մտցնում է, կարող ենք արխիւը նրանց պահանջով բացել, բոլորը ուսումնասիրել»:*



Սամուէլ Նիկոյեան

*Մարտի 1-ի գործով քննչական խմբի ղեկավար Վահագն Յարութիւնեանը, յիշեցնենք, վերջին ասուլիսում յայտարարել էր, թէ իրենց չի տրամադրուել այդ լուսանկարը:*

*Փաստահաւաք խմբի նախկին անդամ Անդրանիկ Քոչարեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում արտայայտեց իր տարակուսանքը. - «Այդ փաստը նա (Նիկոյեանը) պարտաւոր էր ոչ թէ արխիւացնել, այլ ուղարկել նախաքննական մարմնին: Արխիւացում՝ նշանակում է կոծկել կոնկրետ փաստ: Եւ պարոն Նիկոյեանը պարտաւոր է գոնէ հիմա այդ արխիւացուած նիւթերից հանել մեր նամակը՝ համապատասխան նիւթի հետ միասին եւ ուղարկել պարոն Վահագն Յարութիւնեանին»:*

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ «ԱՊՕՐԻՆԻ» Է ՀԱՄԱՐՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Հայաստանի փաստաբանների պալատի խորհուրդը «ապօրինի» է որակում ոստիկանութեան Երեւանի Կենտրոնի բաժնի աշխատակիցների գործողութիւնները Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) երիտասարդ ակտիւիստների փաստաբանների նկատմամբ:*

*Այս մասին խորհուրդը որոշում է կայացրել Օգոստոսի 12-ի արտահերթ նիստում: Որոշումը վերաբերում է Օգոստոսի 9-ին Երեւանի Կարապի լճի մերձակայքում ոստիկանների հետ միջադէպից յետոյ ՀԱԿ եօթ երիտասարդ ակտիւիստներին ոստիկանութեան Կենտրոնի բաժին բերման ենթարկելու եւ ձերբակալելու ընթացքում տեղի ունեցածին: Երիտասարդներին ոստիկանութեան Կենտրոնի բաժին բերման ենթարկելուց յետոյ փաստաբաններ Վահէ Յովսէփեանի ու Ստեփան Ոսկանեանի նկատմամբ կիրառուել են անօրինական գործողութիւններ՝ խոչընդոտուել են փաստաբանների լիազօրութիւնները, նրանց նկատմամբ բռնութիւն կիրառելուց զատ՝ ոստիկանութեան աշխատակիցները փաստաբաններին որոշ ժամանակով զրկել են ազատութիւնից:*

*Փաստաբան Ստեփան Ոսկանեանն «Ազատութիւն» ռատիոկայանին պատմել էր այն մասին, որ ոստիկանները ոչ միայն արգելում էին իրենց աշխատել, այլեւս որոշ ժամանակով փակել էին սենեակում ու անգամ արգելում էին դուրս գալ ոստիկանութեան շէնքից: Ոստիկանները Ոսկանեանից խլել են նրա բջջային հեռախօսը:*

*«Մեզ չթողեցին դուրս գալ, ասացին՝ ինչ-որ տեղ գործողութիւններ են կատարում, անձ են տանում-բերում, բայց տեսանք, որ տղաներից մէկին տարան, երեւի դուրս տարան ու դրանից յետոյ մենք ոչ մի բան չենք տեսել, որովհետեւ սենեակում փակուած ենք եղել: Յետոյ փորձել ենք դուրս գալ՝ ասելով, որ խմելու ջուր ենք ուզում, մեզ ասացին, որ ոչ մի բան չի թոյլատրւում տալ, վերցնել: Մենք ասացինք՝ այդ դէպքում ուզում ենք դուրս գալ, մեզ ասացին, որ նոյնիսկ չենք թողնում շէնքից դուրս գալ: Ու այդպէս սպասել ենք - յետոյ պարզեցինք, որ տղաներին փաստօրէն հանել ենք շէնքից ու մենք արդէն դուրս եկանք», - պատմել էր Ոսկանեանը: Փաստաբան Վահէ Յովսէփեանն էլ նշում է, որ ոստիկաններն անում էին հնարաւորը, որպէսզի երիտասարդները չստանան փաստաբանական օգնութիւն:*

*Մինչ փաստաբանները պնդում են, թէ ինչպէս իրենք, այնպէս էլ իրենց պաշտպանեալները ոստիկանութիւնում ենթարկուել են ճնշումների, ոստիկանապետ Ալիկ Սարգսեանն անցած շաբաթ լրագրողների հետ հանդիպմանը յայտարարել էր, թէ փաստաբանները ազատ ելումուտք են ունեցել շէնք բերման ենթարկելու հենց առաջին պահից:*

# ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ «ԽԱՅՏԱՌԱԿ» Է ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

*Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատեանը Գիւմրիում լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց, թէ Հայաստանի տնտեսութիւնը «խայտառակ վիճակում է»:*

*«2013 թուականին կարող է պետութիւնը կորցնենք», - շարունակեց Բագրատեանը՝ նկատի ունենալով արտաքին պարտքի սպասարկումը: «Մենք մօտ ենք լինելու դեֆոլտին: Այս տարի պարտքի սպասարկմանն ու մարմանը գնացել է 90 միլիոն տոլար: Միւս տարի 90-ը դառնում է 190: Միւս տարի՝ 2013-ին 190-ը դառնում է 478 միլիոն տոլար, որից 433-ը Կառավարութեանն է, 45-ը՝ Կենտրոնական բանկինը: Նաեւ սա ասեմ, որ մեր իշխանութեան օրօք պետութեան անունից պարտք վերցնում էր միայն կառավարութիւնը: Այսօր Կենտրոնական բանկն էլ է վարկ վերցնում»:*

*Բագրատեանը ասաց, թէ յայտնի չէ, որ որքան է Հայաստանի արտաքին պարտքը. - «Յստակ թիւը չգիտի ոչ ոք»:*

*Ես ձեզ յայտարարում եմ պատասխանատու ձեւով- Արտաքին պարտքի մէջ պէտք է մտցնել նաեւ նախարարութիւնների աւանդները: Պաշտպանութեան նախարարութիւնը, յամենայն դէպս մէկ տարի առաջ, աւանդ ունէր բանկում: Նախարարութիւնը տոկոսով փող է դրել բանկում: Միայն Պաշտպանութեան նախարարութիւնը չէ, եւս 2-3 նախարարութիւն կայ: Նախ, սա ռիսկային փող է»:*



Հրանտ Բագրատեան

*«Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ իշխանութեան գալու պարագայում արդեօք Հայ ազգային կոնգրեսը կը կարողանայ տնտեսութիւնը դուրս բերել այս վիճակից եւ որն է լինելու առաջին քայլը, Բագրատեանը պատասխանեց. - «Կենտրոնական բանկը անմիջապէս հրաման կը ստանայ, որպէսզի որոշակի վալիւտա գնի, տրանսֆերտների մի մասը տրանսֆորմացնի վալիւտայի, որը կը վճարուի դրանց: Այդ ընթացքում, յամենայն դէպս՝ առաջին վեց ամսում, տեղի կ՛ունենայ գնաճ, որ կը փորձենք զսպել՝ ջարդելով բոլոր մոնոպոլիաները- Եթէ ես կառավարութիւնը վերցնեմ, նոյն երեկոյ յայտարարելու եմ՝ վաղը կարող էք շաքար բերել եւ թող որեւիցէ մէկը արգելի դա: Բոլոր ռեժիմները կը թեթեւացնեմ, մաքսային նորմերը անմիջապէս կը հանեմ, եւ կը փորձենք գործին միացնել ոչ թէ 10 օլիգարխի, այլ հարիւր հազարաւոր մանր բիզնեսմենների ձեռնարկատիրական էներգիան»:*

# ԼՈՒՐԵՐ

## ԵՐԵՒԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻՆ ՉԷ՞Ն ԽԱՆԳԱՐՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ԱՆՃՈՌՆԻ «ԷԼԻՏԱՐ ՇԷՆՔԵՐԸ». ԲԱՑ ՆԱՄԱԿ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

*Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը բաց նամակ է ուղղել Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանին՝ կոչ անելով դադարեցնել կրպակների ապամոնտաժումը:*

*«Յարգելի պարոն քաղաքապետ. Ձեր կայացրած վերջին որոշումը, ըստ որի ապամոնտաժուել եւ դեռ ապամոնտաժուելու են Երեւան քաղաքում գործող եւ չգործող հազարաւոր կրպակներ, երկրում հերթական սոցիալական լարուածութիւնն է առաջացնում: Կրպակների ապամոնտաժումն ուղեկցւում է ոստիկանական տեռորով, թաղապետարանների որոշ աշխատակիցների գռեհիկ պահուածքով: Դուք յայտարարում էք, թէ կրպակները խաթարում են Երեւան քաղաքի տեսքը: Այո՛, համաձայն ենք, սակայն միթէ՞ Ձեր պայքարը Երեւանի անաղարտ տեսքի համար պէտք է սկսել ամենաչքաւոր խաւից:*

*Ի՞նչ է, Երեւանի արտաքին տեսքին չէ՞ն խանգարում Նախկինում կառուցուած անճոռնի «էլիտար շէնքերը», որոնք ոչ մի կապ չունեն եւ չեն էլ ունենայ Երեւան քաղաքի ճարտարապետական տեսքի հետ: Եթէ իսկապէս Դուք եւ Ձեր աշխատակիցները Երեւանը «տեսքի բերելու» խնդիր էք դրել Ձեր առջեւ, ապա կարող էք սկսել հենց այդ անիմաստ շէնքերից: Իսկ չքաւոր մարդու, չարքային աշխատաւորի դէմ պայքարելը, նրանց հացի կարօտ եւ ընչազուրկ թողնելն այնքան էլ մեծ խիզախութիւն չէ, մանաւանդ եթէ հաշուի առնենք այն վարչական ռեսուրսը, որին Դուք տիրապետում էք:*

*Յարգելի պարոն քաղաքապետ.*

*Կոչ ենք անում Ձեզ դադարեցնել այս արշաւը, որն առանց հացի է թողնելու եւս մի քանի հազար հոգու, ովքեր ապագայում, ուզեն կամ չուզեն, բռնելու են արտագաղթի ճանապարհը: Իսկ բարեկարգ Երեւան՝ առանց Երեւանի բնակիչների, ոչ մէկին պէտք չէ»,- ասւում է բաց նամակում:*

## ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԱՌԵՑՈՒԵԼՈՒ Է. ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻ ՔԱՂԱՔԱԳԷՏ

*Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացը հնարաւոր է սառեցուի ներկայ փուլում: Այս մասին տուած իր հարցազրոյցում ասել է ատրպէյճանցի քաղաքագէտ Տոֆիկ Աբբասովը՝ ընդգծելով, որ խօսքը «բանակցային գործընթացի տապալման մասին չէ»:*

*«Չեմ կարծում, որ մօտ ապագայում հնարաւոր կը լինի իրականացնել կարեւոր քայլ համապարփակ խաղաղ համաձայնագիր ստորագրելու ուղղութեամբ: Ամենայն հաւանականութեամբ, հարկ կը լինի բանակցային գործընթացում սպասել նոր փուլի, որը, ըստ իս, կը սկսուի Հայաստանում եւ Ռուսաստանում նախագահական արշաւներից յետոյ»,- ասել է ատրպէյճանցի քաղաքագէտը՝ նշելով, որ նոր փուլն իրենից ներկայացնելու է Մադրիդեան սկզբունքների նորացուած տարբերակը:*

## ԿԽՄԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՏՐՊԷՅՃԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ

*Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի ներկայացուցիչները հանդիպել են ատրպէյճանական գերութեան մէջ պահուող 3 հայ ռազմագերիներին եւ 5 քաղաքացիական անձանց՝ մէկ ընտանիքի անդամների: Այդ մասին APA-ին յայտնել է ԿԽՄԿ ատրպէյճանական ներկայացուցչութեան մամուլի քարտուղար Շախլա Ղահրամանովան:*

*Ըստ աղբիւրի, իրականացուել է գերիների պահման եւ ֆիզիկական վիճակի մոնիտորինգ:*

*ԿԽՄԿ ներկայացուցիչները 4 ուղերձ են փոխանցել գերութեան մէջ գտնուող անձանց եւ նրանցից 5 նամակ են վերցրել:*

*Նշենք, որ քաղաքացիական անձինք Գէորգեանների ընտանիքն են, իսկ ընտանիքի հայրը՝ 8 անգամ դատուած Եղիշէ Գէորգեանը Հայաստանում կասկածւում է սպանութեան մէջ: Գէորգեանը կնոջ եւ 3 անչափահաս երեխաների հետ 2010 Յունուարի 10-ին փախել է Ատրպէյճան:*

*Զինուորներից 2-ը գերուել են 2009թ. Մայիսին, եւս մէկը Յուլիսին:*

## ԹՐՔԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒ ԴԷՄ ԲԱՑՈՒԱԾ ԴԱՏՈՎ

*Շարունակուած էջ 1-էն*

*մատան ներկայացուցիչներուն, սակայն անոնք խուսափած են ընդունիլ փաստաթուղթերը եւ ապա պահանջած են Ամերիկեան դատարանէն, որպէսզի դադրեցնէ դատը՝ փաստաթուղթերը օրինաւոր կերպով չյանձնելու պատճառաբանութեամբ:*

*Օգոստոս 2-ի իրորոշումով, ԱՄՆ Դաշնակցային Դատարանը որոշում կայացուց, որ ամբաստանեալ կողմը օրինաւոր կերպով տեղեկացուած է եւ փաստաթուղթերը յանձնուած:*

*Դատարանը արձանագրեց նաեւ որ, դրամատուներու ապահովութեան պահակները փորձած են ձախողցնել փաստաթուղթերու յանձնումը: Հետեւաբար, մինչեւ Օգոստոս 19-ը անոնք պէտք է պատասխանեն բողոքագիրներուն:*

*Դատարանը նաեւ հաստատեց որ, դիւանագիտական խողովակներով տեղեկացուած է նաեւ Թրքական Հանրապետութիւնը ու ան եւս պէտք է պատասխանէ մինչեւ Օգոստոս 19-ը:*

*«Առաջին պահէն իսկ, դրամատուները աշխատեցան դժուարացնել այս դատական գործը»-, ըսաւ հայկական կողմի գլխաւոր փաստաբան Վարդգէս Եղիայեան ու աւելցուց-, «Վերջապէս, ամիսներ շարունակ փորձելէ ետք՝ խուսափիլ փաստաթուղթերու ստանձնումէն, Միացեալ Նահանգներու Դաշնակցային Դատարանը պահանջեց ամբաստանեալ երեք կողմերէն՝ պատասխանել հայերու բողոքներուն»:*

## «ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ». AFP



*Համահայկական 5-րդ խաղերին է անդրադարձել հեղինակաւոր «Ֆրանսպրես» (AFP) գործակալութիւնը: «Ամբողջ աշխարհից հազարաւոր հայեր էին կիրակի, Օգոստոս 14-ին հաւաքուել Օլիմպիական ոճի մրցաշարի բացմանը մասնակցելու համար, որի նպատակն է խրախուսել հայերի վերադարձը հայրենիք»,- գրում է յօդուածագիրը եւ յաւելում, որ այս տարի Համահայկական խաղերին 3200-ից աւելի մարզիկ է մասնակցում:*

*Գործակալութիւնը զրուցել է նաեւ Համահայկական խաղերի միջազգային կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանի հետ, որը փաստել է, որ խաղերը բազմաթիւ հայերի են հայրենիք բերում: «Մենք շատ ենք խօսել միգրացիայի մասին, ինչպէս նաեւ այն փաստի մասին, որ շատ երիտասարդներ լքում են երկիրը, այս խաղերը, սակայն, այդ ամէնի հակառակ կողմն է. դրանք հայրենիք են ձգում մարդկանց»,-ասել է Իշխանեանը:*

*«Համարւում է, որ Հայաստանի բնակչութեան թիւը Սովետական Միութիւնից 1991թ. անկախանալուց ի վեր մօտ մէկ միլիոնով պակասել է, եւ երկրից դուրս ապրող էթնիկ հայերի թիւը շատ աւելի մեծ է, քան այն 3,2 միլիոնը, որ ապրում է կովկասեան այս փոքր երկրում: Բնակչութեան թուի կրճատման հետ կապուած աճող մտահոգութիւնների ֆոնին կառավարութիւնը նաեւ «Արի Տուն» ծրագիր է իրականացնում, որի միջոցով փորձում է արձակուրդների ժամանակ հարիւրաւոր հայերի հայրենիք բերել եւ, ի վերջոյ, համոզել նրանց վերաբնակուել այնտեղ եւ այդպիսով բեկել այդ տենդենցը (բնակչութեան թուի կրճատումը),- նշուած է յօդուածում:*

## ՀԱԿ-ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ 5ՐԴ ՓՈՒԼԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*ուած երիտասարդներու կարգավիճակէն:*

*Մինչ երկխօսութիւնը կը շարունակուի, կալանաւորուած երեք երիտասարդներու կարգավիճակը ոչ միայն չէ փոխուած, այլեւ մեղադրանք ներկայացուած է ՀԱԿ-ի եւս երեք անդամներու՝ Արեգ Գէորգեանի, Սահակ Մուրադեանի եւ Դաւիթ Քիրամիջեանի դէմ: Անոնք կը մեղադրուին՝ «խուլիգանութիւն» կատարելու մէջ:*

*Կալանաւորուած ՀԱԿ-ի ակտիւիստներու փաստաբանները դիմած են Վերաքննիչ Դատարան՝ անոնց խափանման միջոցը փոխելու միջնորդութեամբ:*

*Միւս կողմէ, իշխանական պատուիրակութիւնը արդէն իսկ մշակած է իր փաստաթուղթը՝ ի պատասխան ՀԱԿ-ի կողմէ ներկայացուած 85 էջնոց փաստաթուղթին: ՀԱԿ-ը իր փաստաթուղթին մէջ ներկայացուցած էր արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ կայացնելու անհրաժեշտութեան հիմնաւորումները: Այդ հիմնաւորումներուն իշխանութիւնը արձագանքած է 130 էջնոց փաստաթուղթով:*

*Իշխանական պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեան «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցեց, որ 5-րդ հանդիպման ժամանակ իրենց փաստաթուղթը չէ քննարկուած:*

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇԱՆԱԿԱԾ Է ԵՐԿՈՒ ԴԵՍՊԱՆ ՄԻԱՏԵՂ

*Շարունակուած էջ 1-էն*

*փորձառութիւն եւ գիտելիք՝ Հարաւային Կովկասի եւ տարածաշրջանի պատմութեան, լեզուներու եւ մշակոյթի վերաբերեալ: Միացեալ Թագաւորութեան Արտաքին Գործերու Նախարա-րութենէն ներս աշխատելու ընթացքում անոնք զբաղած են քաղաքականութեան տարբեր հարցերով, որոնց շարքին անվտանգութեան քաղաքականութիւն, Եւրոպայի Միութեան առեւտրային յարաբերութիւններ եւ զարգացում եւ մարդու իրաւունքներ:*

*Հայաստանի մէջ միատեղ դեսպաններ իրենց նշանակման մասին անոնք ըսած են. «Մենք ուրախ ենք, որ նշանակուած ենք Հայաստանի մէջ համատեղ դեսպաններ: կը հաւատանք, որ մեր միասնական եռանդով ու փորձով նոր լիցք կը հաղորդենք Միացեալ Թագաւորութեան եւ Հայաստանի միջեւ աւանդական ջերմ յարաբերութիւններուն: կը կարծենք, որ միասին աշխատելով կը կարողանանք իսկական ներդրում ունենալ մեր երկու երկիրներու բարեկեցութեան ու անվտանգութեան»:*

# ԹՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ ԵՆ ԱՆԻՆ ԸՆԴԳՐԿԵԼ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ



*Թուրքիայի իշխանութիւններն առաջարկել են միջնադարյան հայկական Անի քաղաքն ընդգրկել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգութեան ցուցակում: Այս մասին հաղորդում է Nouvelles d'Armenie-ին՝ յղում անելով թրքական «Անատոլու» գործակալութեանը:*

*«Եթէ Անին ընտրուի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, այդ մասին մեծաթիւ ռեպորտաժներ կը պատրաստուեն: Դա կը նպաստի Անիում զբօսաշրջութեան զարգացմանը, որտեղ զբօսաշրջիկների մշտական աճ է նկատւում»,-ասել է Թուրքիայի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան Կարսի մարզային պատասխանատու Հաքան Դողանայը: Ըստ նրա՝ 2011 թ. առաջին կիսամեակում Անի է այցելել 23 հազ. մարդ՝ հիմնականում Ֆրանսիայից, Անգլիայից, Ճապոնիայից:*

*«Թրքական վարչակազմի ներկայացուցիչը հերթական անգամ խուսափել է «հայերը» բառից: Այդ բաց թողնուած բառն ամէն անգամ մեր վրդովմունքն է առաջացնում, երբ կարդում ենք զբօսաշրջիկների համար վահանակները: Ինչպէ՞ս կարող է ՅՈՒՆԵՍԿՕ-ն վերահսկել պատմութեան եւ մշակոյթի աղաւաղումը մի երկրում, որտեղ նման գործելակերպն արդէն կանոն է դարձել,-անդրադառնում է Nouvelles d'Armenie-ին:*

# ԱՐԱՐԱՏԸ ԿԸ ՏԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ, ԹՈՒՐՔ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

*Թրքական ամենահամարձակ թերթի համբաւն ունեցող «Թարաֆի» սիւնակագիր Սերդար Քայան իր յօդուածում յայտարարել է, որ պատրաստ է Արարատը վերադարձնել հայերին:*

*«Արարատ լեռը հայերի համար սուրբ է: Դրա պատճառը Արարատի ունեցած հսկայական դերն է հայերի պատմութեան եւ ազգային ինքնութեան մէջ: Այսօր այն գտնւում է Թուրքիայի տարածքում, հայ-թրքական սահմանից ոչ հեռու: Այն հայերի համար այնքան մօտ է եւ այնքան հեռու»,-յօդուածի նախաբանում գրում է Քայան եւ շարունակում.*

*«Հայերի՝ Արարատի նկատմամբ ցուցաբերած մօտեցումները սովորական տարածքային ընդլայնման քաղաքականութիւնից հիմնաւորապէս տարբեր են»:*

*«Թրքական պաշտօնական մօտեցումն այս է. հայրենիքի հողերը ներկուած են «շեհիթների» (մարտիկների) արիւնով, ուստի ամէն մի թիզ հող «սուրբ» է, ամբողջ աշխարհի հայեացքն ուղղուած է Թուրքիայի վրայ, հարեւանները գերտէրութիւնների հետ փորձում են թուլացնել մեր երկիրը: Նման մօտեցման պարագայում նոյնիսկ մէկ թիզ հող զիջելն անգամ չի կարող տեղաւորուել մարդկանց ուղեղներում»:*

*Մի հարց եմ տալիս ծանօթներիցս մէկին. «Արարատը հայերի համար անչափ կարեւոր է, իսկ ինձ համար նոյնն է, ինչ բոլոր միւս սարերն ու լեռները» Խաղաղութեան ճանապարհին կարելի է մեծ քայլ անել եւ այն տալ հայերին»: Սպասում եմ «այո» կամ «ոչ» պատասխաններին, սակայն զրուցակիցս չի տալիս յստակ պատասխան ու սկսում է խօսել լերան ռազմավարական կարեւորութեան մասին»:*

*«Իհարկէ, իրական կեանքում խիստ բարդ է նման առաջարկը կեանքի կոչելը: Միշտ էլ դրա դէմ մեծ թուով մարդիկ դուրս կը գան»,-յաւելում է թուրք սիւնակագիրը:*

# ԱՐԱՐԱՏ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ ԹՈՒՐՔԵՐԸ ՏՆԿԱԾ ԵՆ 10 ՄԻԼԻՈՆ ԾԱՌ

*Արարատ լերան վրայ տնկուած շուրջ տասը միլիոն ծառերը իսկական դրախտավայրի վերածած են սարը: Այս մասին, ինչպէս կը տեղեկացնէ «Ռատիքալ» օրաթերթը, ըսած է Իգդիրի անտառտնտեսութեան պետ Թաներ Թազեկինը:*

*«Եւրոպայի ամենաբարձր լեռը համարուող Աղըր Տաղըի՝ (Արարատ լեռ,- Tert.am) Իգդիրին նայող հատուածը ամբողջութեամբ կը կանաչապատենք: 2500 մ բարձրութեան վրայ տնկած ենք ցրտադիմացկուն տարբեր տեսակի պտղատու ծառեր եւ բոյսեր»,- ըսած է Թազեկինը:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

# ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅԱՇԱՏ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ



*Ռայտ շրջանի քաղաքապետ Արթին Էքմէքճեան, Սեպուհ Գալփաքեան եւ Վաչէ Թոփուզեան*

*Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ, Լիբանանի խորհրդարանի անդամ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան տեսակցութիւններու շարք մը ունեցած է Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ, հանդիպելով տեղական, վարչական, գաղութային եւ ազգային պատասխանատուներու հետ:*

*Օգոստոս 4-ին, Ընկ. Սեպուհ Գալփաքեան հանդիպում ունեցաւ Աւստրալիոյ հարաւ արեւելեան New South Wales նահանգի Հայաշատ Ռայտ շրջանի քաղաքապետ Արթին Էքմէքճեանին հետ, ներկայութեամբ քաղաքապետութեան անդամ Սարգիս Եսելեանի եւ Ս.Դ.Հ.Կ. Աւստրալիոյ շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Վաչէ Թոփուզեանի: Քաղաքապետարանի կեդրոնին մէջ կայացած այս հանդիպումը Աւստրալիոյ առօրեայ կեանքին մէջ եւ անոնց մշակած սերտ կապերը՝ երկրի միւս քաղաքայիններուն հետ, ինչ որ մեծ յարգանք յառաջացուցած է Հայութեան հանդէպ: Ռայտի քաղաքապետ Արթին Էքմէքճեան իր կարգին գոհասանքով արտայայտուեցաւ Ս.Դ.Հ.Կ.-ի գործունէութեան մասին, մասնաւորաբար գնահատելով հայահոծ Ռայտ շրջանին մէջ կուսակցութեան տարած աշխատանքները:*

*Ընկ. Սեպուհ Գալփաքեան այցելութիւն տուաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի թեմի բարեջան առաջնորդ Տէր. Աղան Արք. Պալիոզեանի բնակարանը, ուր առաջնորդ սրբազանը անհանգստութեան պատճառով կը բոլորէ ապաքինման հանգրուան մը: Ընկ. Գալփաքեանի եւ Պալիոզեան Սրբազանի միջեւ զրոյցի առանցքը կազմեցին եկեղեցական, ազգային եւ գաղութային հարցերը, շրջանի Հայութիւնը յուզող խնդիրները: Պետական երեսփոխանը շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը, իր ազգանուէր ծառայութեան համար, ինչպէս նաեւ գնահատեց՝ գաղութը ձեռնհասօրէն վարելու իր կարողութիւնը:*



*SBS ռատիօկայանի հարցազրոյց ընթացքին՝ Սեպուհ Գալփաքեան եւ Մատիանա Իվանեան*

*Օգտուելով Ընկ. Սեպուհ Գալփաքեանի Սիտնիի մէջ գտնուելու առիթէն, ազգային փոքրամասնութիւններու յատկացուած պետական SBS (Special Broadcasting Services) ռատիօկայանի Հայկական բաժանմունքը հարցազրոյց կատարեց պետական երեսփոխանին հետ: Բաժանմունքի պատասխանատու թղթակից Մատիանա Իվանեանի մը առիթ մըն էր խօսելու Ռայտ շրջանին մէջ բնակող մօտ 5000 Աւստրալահայ ընտանիքներու հարցերուն մասին: Ժողովակիցները կարծիքներ փոխանակեցին համայնքը յուզող թեմաներուն, ինչպէս նաեւ ազգային հրատապ հարցերուն շուրջ: Մեծապէս գնահատելով քաղաքապետ Էքմէքճեանի ազգային գիտակցութիւնը եւ Հայկական հարցերու հանդէպ իր բարձր ու հետեւողական հետաքրքրութիւնը, Ընկ. Գալփաքեան քաղաքապետին եւ քաղաքապետարանի անդամ Սարգիս Եսելեանին յորդորեց պահպանել գործունեայ ներկայութիւնը համայնքէն ներս եւ ապահովել Ռայտ շրջանի հայորդիներուն կարիքները: Ընկ. Գալփաքեան նաեւ գնահատեց Աւստրահայերու աշխոյժ մասնակցու-*

*Շար.ը էջ 16*

# ԱՒԱՏԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԱՒԻՐՔԸ

*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*




2009 Թուականի Հոկտեմբերի սկիզբին Սերժ Սարգսեան այցելեց Լոս Անճելըս, Հայ-Թրքական Արձանագրութիւններու կապակցութեամբ համայնքիս կարծիքը իբրեւ թէ իմանալու համար: Այդ այցելութեան առթիւ կազմակերպուած/բեմադրուած ցոյցին «Սերժիկ դաւաճան» եւ նմանատիպ մեծկակ պաստառներու կողքին, մեր պարզած «Ժողովրդավարութիւն, ո՛չ թէ Աւատապետութիւն» համեստ ցուցանակը օրին անտեղի թուեցաւ: Մարդիկ այնքա՞ն գրգռուած էին Սարգսեանի ֆութպոլային դիւանագիտական խաղերով եւ Հայ-Թրքական Արձանագրութիւններով, որ չէին նկատեր, որ այդպիսով ան կը յաջողէր երկարաձգել կեղծիքներով գրաւած իր իշխանութիւնը եւ բոլորի մտասեւեռումը վանել ժողովրդավար համակարգի մը ստեղծման անհրաժեշտութեան պայքարէն: Պայքար, որ մեր հաստատ համոզումով, մեր մեծագոյն առաջնահերթութիւնն է եւ ամենէն արդիւնաւէտ լուծումը, կասեցնելու կործանման ուղիի վրայ գտնուող Հայաստանի գահավէժ ընթացքը:

Կասկած չկայ, որ Հոկտեմբեր 27, 1999ի կործանարար դաւադրութիւնէն ի վեր Հայաստանի մէջ հետզհետէ հաստատուեցաւ աւատապետական դրութիւն մը: Ռոպերթ Քոչարեանի նման կիսագրագէտ ու գռուզ անձի մը իշխանութեան գրաւումով, սկսաւ իր նմաններու ղեկավար դիրքերու գրաւումը: Երբ անարժան մարդիկ կը հասնին բարձր դիրքերու, անոնք կը նախընտրեն իրենց շուրջը հաւաքել իրենց ենթակայ կամակոր մարդիկ, որպէս զի աւելի հեշտ ըլլայ զանոնք ղեկավարելը: Այսպիսով իշխանական բուրգը հետզհետէ համալրուեցաւ այդ տիպարներով ու ... «լաւագոյն տղերքը հեռացան», որովհետեւ արժէչափը ո՛չ ազգասիրութիւնն էր եւ ո՛չ ալ գիտութիւնն ու իմաստութիւնը, այլ՝ անձնական կապերը եւ ,իրարու հացին իւղ քսելը»:

Քոչարեանի իշխանութեան գալը եւ Հայաստանի այս գահավիժումը դէպի աւատապետութիւն, չէր կրնար իրագործուիլ առանց արտաքին օժանդակութեան, որ այս պարագային Ռուսիան էր, որը Պուտինի օրով նմանօրինակ գործընթաց մը կը բոլորէր: Ռուսիան, Հայաստանի իր դրածոներով, «գոյք՝ պարտքի դիմաց» եւ նմանօրինակ ձեւակերպութիւններով, իր ամբողջական տիրապետութեան կ'ենթարկէր Հայաստանը, խափանելով անոր անկախ պետականութեան ամրակայման ձգտող քայլերը: Ջենք կրնար չտարուիլ զուգահեռ մը անցընելու, Ռուսիոյ հովանաւորութեամբ բուսած Հայաստանի օլիկարխ աւատապետերուն եւ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքի՝ Պոլսոյ հայ ամիրայական դասակարգի միջեւ: Առաջինը՝ միայն իր շահերուն հետամուտ, մենաշնորհներու հաստատումով կը հարստահարէ սեփական երկրի ժողովուրդը, պատճառ դառնալով գործազրկութեան, գիւղերու դատարկման եւ ազգաբնակչութեան հայրենիքէն հեռացման: Իսկ երկրորդը՝ դարձեալ միայն իր շահերուն հետամուտ, կ'անտեսէր հայկական գաւառներու թշուառ դրութիւնը, պատճառ դառնալով անոնց դատարկման եւ գաղթականութեան աճին: Առաջին Համաշխարհային Պատերազմը չխնայեց ոչ ամիրաները, ոչ պարզ ժողովուրդը եւ ոչ ալ մեր պատմական հայրենիքի հողատարածքը: Պէտք չունինք սպասելու Համաշխարհային Պատերազմի մը, համոզուելու համար, որ նմանօրինակ ճակատագրի մըն ալ մենք ենթակայ ենք այսօր:

Աւատապետական դրութեան հաստատումը Հայաստանի մէջ, կը շարունակէ ունենալ իր կործանարար հետեւանքները ազգաբնակչութեան դատարկման, «ուղեղներու արտահոսք»ի, ժողովրդային լայն խաւերու աղքատացման, հարուստի եւ աղքատի միջեւ խրամատի ընդլայնման, արդարադատութեան խեղճացման, օրէնքներու քմահաճ ոտնահարման, ինչպէս նաեւ ժողովուրդի հոգեբանական վիճակի անկման եւ Խաչակեանի գուշակած «ոգու սով»ի տարածման գծով: Գոյացած է յուսալքուածներու եւ անիրաւութեանց դէմ պայքարը անօգուտ համարողներու խաւ մը, որ ստրկական հոգեբանութեամբ կը հետեւի հայկական մէկ ասացուածքին՝ «այն ձեռքը որ չես կրնար կտրել, համբուրէ եւ ճակտիդ դիր»: Այս խաւը երբ կը տեսնէ, որ աշխարհական թէ կղերական աւատապետներ, Խորենացիի բնութագրումով՝ «հաւատքը կը ծախեն այս ունայն կեանքի համար», արդարացուցիչ կը գտնէ ամէն ինչ առուծախի հանելու իր ստրկամտութիւնը:

Բարեբախտաբար գոյացած է նաեւ խաւ մը, որ վերահասու մեզի սպասուող աղէտներուն, կը ջանայ ծառանալ տիրող աւատապետական դրութեան դէմ, որու վերացումով միայն կարելի պիտի ըլլայ կանխել գալիք հաւանական արհաւիրքները: Այդ խաւը կը գիտակցի, որ երկրի վիճակի բարելաւումը չի կրնար գալ լոկ մէկ աւատապետը ուրիշով մը փոխարինելով: Անհատներէն անդին աւելի հրամայական է համակարգային փոփոխութիւնը, ժողովուրդի մտայնութեան եւ հոգեբանական վիճակի փոփոխութիւնը: Այդ խաւը կը գիտակցի, որ որքան տարածուն է երկրէն ներս ժողովրդավարութեան հիմքը, այնքան ամուր է երկրի դիրքը, այնքան երաշխաւորուած է երկրի բնակչութեան արժանապատիւ կեանք մը ապրելու իրաւունքն ու ապագան, որովհետեւ երկիրը կախեալ չէ միայն մի քանի անձերէ, որոնք կարելի է կաշառել, խեղճացնել եւ կամ նոյնիսկ սպաննել: Այդ խաւը կը գիտակցի, որ փոխանակ մեր փրկութիւնը անհատներէ յուսալու, մենք պէտք է զարկ տանք ժողովուրդի մտայնութեան մէջ Ջարենցեան պատգամի ամրապնդման՝ հաւաքական ուժի գոյառման: Այդ խաւը կը գիտակցի, որ երազատեսութիւն է ակնկալել արեան հեղմամբ իշխանութիւնը զաւթողներէն, Հոկտեմբեր 27 եւ Մարտ 1 դաւադրողներէն, որ վեհանձնութիւնը ունենան յարգելու սահմանադրական միջոցներով իրագործուող իշխանափոխութիւն մը: Համատարած անարդարութիւնը կարելի է սրբագրել միայն համատարած ընդվզումով: Համատարած պայքար եւ ընդվզում, յանուն ժողովրդավար Հայաստանի գոյառման:

# ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ԳԱՆԴՈՒԻ ՃԱԽԱՐԱԿԸ

*ԴՈԿՏ. ԱՐԱՄԱՅԻՍ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ*

Ո՞րն է այլընտրանքը...

Այստեղ հազիւ թէ ճաշակի ու ընտրութեան հարց լինի, հարցը անտարակոյս պարտադիր պահանջի, ժամանակի անհրաժեշտութեան, գաղափարախօսութեան թելադրանքի, դասակարգային պայքարի ու անտագոնիզմի հարց է: Եղել են ժամանակներ, երբ Մհաթմա Գանդու ճախարակը հակաքոլոնիալիզմի դէմ պայքարի ընթացքին ծանր հրետանու դեր է կատարել, իսկ մի այլ ժամանակ սոցիալական յեղափոխութիւնները լեռնային վարար գետի նման սրբել տարել են գանդիների փասիֆիստական գաղափարախօսութիւնն ու նրանց համբերութեան ճախարակները ... Այդ մասին գիտենք մարդկութեան հասարակութեան դինամիկ զարգացումից: Որ աշխարհում մեծածաւալ դրական տեղաշարժումներ են տեղի ունեցել յեղափոխութիւններ շնորհիւ, դա նոյնպէս անվիճելի իրողութիւն է:

Այսօրուայ փոխկապակցուած աշխարհում բոլոր ժողովուրդներն իրենց բազմաբնոյթ հարցերն ունեն լուծելու, հայ ժողովուրդն էլ ունի իր հրատապ օրուայ խնդիրները, որոնց մասին բոլորից լաւ մենք՝ հայերս գիտենք: Հայաստանի հանրապետութեան իշխանութիւնները քաջածանօթ են հարցերին, աւելի ճիշտ, հենց իրենք են հարցերի սկզբնաղբիւրը, սակայն իրենց սեփական, խմբակային ու դասակարգային շահերը պաշտպանելու նպատակով, հետեւողականօրէն ծածկում են խնդիրները սուտ ու նպատակադրուած քարոզչութեան թանձր ծխածածկոյթի տակ ...

Աշխատաւորները, ծառայողները, գիւղացիները, գիտնականներն ու ուսուցիչներն... ապրում են համակարգի կողմից ստեղծած հարցերի մէջ ու թէեւ բողոքում են, սակայն նրաց ձայնը լսելի չէ մի շարք կարեւոր հանգամանքների պատճառով, որոնցից ամենաառաջնայինը նրանց արհեստակցական շահերը պաշտպանող արհմիութենական կազմակերպութիւնների ու գաղափարախօսական պլատֆորմ ունեցող կուսակցութիւնների բացակայութիւնն է...

Մենք՝ Հայաստանի հանրապետութիւնից դուրս ապրող հայերս, սփիւռքից, հեռուից, Հայաստանում կատարուող իրադարձութիւնների մասին մեր ուրոյն մօտեցումն ունենք... Անտարբեր չենք: Գրում ենք, բողոքում ենք, օգնում ենք, պահանջում ենք, սակայն մեզ էլ լսող չկայ, քանզի սփիւռքի առաջադէմ ու հայրենասէր հատուածը կանգնած է Հայաստանի աշխատաւոր ու ճնշուած դասակարգի իրաւունքների պաշտպանութեան դիրքերում ու նրանց բողոքները ուղղուած են հայրենաբնակ ժողովրդին կեղեքող ու շահագործող դասակարգի դէմ: Այլ խօսքով, սփիւռքի հայրենասէր ու պահանջող մասը այնքան անցանկալի է Հայաստանի իշխանութիւնների ու մենաշնորհ սիստեմի համար, ինչքան անցանկալի են Հայաստանում ապրող ու իրենց իրաւունքների համար պայքարող զանգուածը:

Աւելի անհեթեթ (պարադոքս) հակասութիւն, քան այն իրողութիւնը, որ «սփիւռքի նախարարութեանը» Հայաստանի կառավարութիւնն է ֆինանսաւորում, չի կարող լինել: Ասում են, ով վճարում է, նա էլ երգն է պատուիրում... Հայաստանի իշխանութիւնները սփիւռքից ուղարկուած՝ ոչ մեր բաց նամակներին, ոչ էլ փակ նամակներին են պատասխանում, հաւանաբար մտածելով, եթէ սփիւռքահայը կապիտալ չունի, ուստի ասելիք ու անելիք էլ չունի... Ինչպէս գիտենք սփիւռքի կողմից կատարուած աշխատանքի արդիւնքներն էլ մեծ չեն: Ճշմարիտ է ժողովրդական իմաստուն ասացուածքը՝ աղբիւրը ինքը պէտք է ջուր ունենայ... իսկ այստեղ խօսքը մի երկրի ու պետականութեան մասին է: «Վերին պալատի ստեղծում» ու «երիտասարդ առաջնորդներ» դաստիարակելու մտայղացումները իրականութեան հետ կապ չունեցող ֆանտազիաներ են: Ազնիւ սփիւռքահայը, հայրենիքում շահ ու պաշտօն չի փնտռում, նրանց ցանկութիւնը հայրենաբնակ հայութեան անվտանգ ու բարեկեցիկ կեանքն է...

Ճիշտ է մտցնել Սփիւռք1 (Ս1) եւ Սփիւռք2 (Ս2 ) հասկացողութիւնը, անշուշտ ոչ բաժանելու, այլ յստակեցում մտցնելու միտումով: Ս1-ը պայմանականօրէն, հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան արդիւնքում ստեղծուած սփիւռքն է, իսկ Ս2-ը անկախութիւնից յետոյ գոյացած սփիւռքը: Ս1 եւ Ս2 միջեւ բազմապիսի տարբերութիւններ կան, թէ՛ իրաւունքների եւ թէ՛ պարտականութիւնների առումով (այս մասին դեռ խօսելու առիթ կ'ունենանք):

Բուն հարցից չհեռանանք: Այսօր Հայաստանում ապրող հայութեան առջեւ հրատապ ու պատասխանատու խնդիր է դրուած իր կենսական հարցերի լուծման ուղ-

Շար.ը էջ 17

# ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ



**ԳԷՈՐԳ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ**

*Հայ Ինքնութեան Փառատօնը՝ որ կազմակերպուած էր Փասատինայի Համագաղութային Մարմնին կողմէ, տեղի ունեցաւ Կիրակի, 31 Յուլիս 2011ի կէսօրուայ ժամը 12:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00-ը, Փասատինայի Յաղթանակի Զբօսայգիին մէջ: Աննախընթացօրէն ներկայ գտնուեցան աւելի քան երկու հազար հայորդիներ:*

*Արդարեւ՝ տեղի ունեցածը հայկական իսկական փառատօնն մըն էր, որ կ՚ընդգրկէր հայկական պարեր, երգ եւ երաժշտութիւն, ասմունք ու համադամ ճաշեր՝ որոնք կրցան ստեղծել խանդավառ բացառիկ մթնոլորտ մը, որուն մասնակից դարձան նաեւ բազում թիւով ոչ հայեր: Օրուայ կարող եւ ժրաջան հանդիսավարն էր Մարի Ակիլեանը:*

*Յետ միջօրէի ժամը 1:45ին կատարուեցաւ պաշտօնական բացումը դրօշակի արարողութեամբ՝ կատարողութեամբը ամերիկեան բանակի ծովուժի միաւորին, որուն յաջորդեց ամերիկեան եւ հայկական քայլերգներու երգեցողութիւնը՝ մենակատարութեամբը երգիչ Արա Սահակեանի:*

*Հուսկ ապա յաջորդաբար բեմ հրաւիրուեցան երգիչներ Սահակ Սիսլեան, Արա Սահակեան, Գէորգ Զաքմաճեան, Նշան Զաղացպանեան եւ Խաչիկ Նահապետեան՝ որոնք իրենց հայրենասիրական եւ ժողովրդական երգերով ստեղծեցին ուրախ եւ խանդավառ մթնոլորտ մը, մինչեւ ուշ երեկոյ:*

*Գեղարուեստական յայտագրին մաս կազմեցին նաեւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Լիլիանի պարախումբերը, որոնք հանդէս եկան հայկական տոհմիկ եւ ժողովրդական պարերով: Հոս տեղին է յիշել որ Հայ Քէմբօ «Քարաթէ»ի աշակերտները՝ հագած իրենց աւանդական տարազները, հանդէս եկան ցուցաբերելով իրենց պաշտպանողական մարմնարուեստի խիստ տպաւորիչ շարժումները:*

*Ժամը մօտաւորապէս 4:30ին տեղի ունեցաւ սպասուած կարկանդակի հատումը, որուն մասնակցեցան Փասատինայի քաղաքապետ Պիլ Պոկարտը, ոստիկանապետ Ֆիլիբ Սէնչէզը, քաղաքապետական խորհուրդի նորընտիր անդամ Ճիմ Մասուտան, Սիէրա Մատրէի քաղաքապետ Ճօ Մոսքան, Հայկական Համագաղութային Միութեան ատենապետ Խաչիկ Շահինեանն ու այլ պետական պաշտօնատարներ, մինչ Արա Սահակեան կ՚երգէր «Ուրախ Տարեդարձ, Փասատինա» անգլերէնով եւ ապա հայերէնով: Փասատինա քաղաքի 125րդ տարեդարձի կարկանդակը նուիրուած էր անուշավաճառ Վրէժին կողմէ:*

*Վերոյիշեալ քաղաքական երեւելիները խօսք առնելով՝ դրուատեցին հայ գաղութի ներդրումը քաղաքի աճման ու անոնց զանազան նուաճումները, առաւտրական թէ մշակութային բնագաւառներէն ներս: Այս առիթով Խաչիկ Շահինեան, Հայ Համագաղութային Մարմնին կողմէ յատուկ յուշատախտակով մը պատուեց քաղաքապետ Պիլ Պոկարթը:*

*Դաշտահանդէսի ընթացքին*

*Շար.ը էջ 16*



*«Ուրախ Տարեդարձ, Փասատինա» կարկանդակի հատումը*

# ԶՈՀՐԱՊ ՇԱՄՄԱՍԵԱՆ ՄԵԼԳՈՆԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ 2011- Ի «ՏԱՐՈՒԱՆ ՄԱՐԴ»Ը

**ԿԱՐՕ ԳԱՍԱՊԵԱՆ**

*Յուլիս 9 2011 Շաբաթ գիշեր, Փասատինայի* Pandora On Green *ճաշարանին մէջ տեղի ունեցաւ Մելգոնեան Սանուց Եւ Բարեկամներ Միութեան տարեկան ճաշկերոյթ պարահանդէսը: Ներկայ էին եւ ընդարձակ սրահը լեցուցած՝ մեծ թիւով Մելգոնեանցիներ, բարեկամներ եւ համակիրներ: Այս ձեռնարկը կազմակերպող յանձնախումբը միեւնոյն ժամանակ ծրագրած էր մասնաւոր հանդիսութեամբ պարգեւատրել Զոհրապ Շամմասեանը՝ որպէս Մելգոնեան Սանուց Միութեան 2011-ի «Տարուան Մարդը»: ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչութեան որոշումով գոցուած Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու ի խնդիր Զոհրապի երկար տարիներու աննկուն, անխոնջ եւ յարատեւ գործունէութիւնը արժանաւորապէս գնահատելու լաւագոյն առիթ էր այս միջոցառումը: (Նկարներու հոսքը կարելի է դիտել այցելելով համացանցի վրայ հետեւեալ կայքէջը.* www.melkonianforever.org)

*Ատենապետ Րաֆֆի Ցնծալեանի բարի գալուստի խօսքէն ետք՝ ներկաները յոտնկայս երգեցին «Անմահ Լուսոյ»՝ Մելգոնեանի քայլերգը: Օրուան հանդիսավարն էր Մելգոնեան Սանուցի Վարչութեան անդամներէն իրաւաբան Լարա Գալաեան որ Մելգոնեանի 1991-ի շրջանաւարտ է, վկայուած է* Yale Law School*-էն եւ անդամ է Կալիֆորնիայի Հայ Իրաւաբաններու Միութեան:*

*Լարայի ելոյթը բուռն ծափահարութիւններով ընդունուեցաւ երբ ան անդրադարնալով Մելգոնեանի փայլուն անցեալին՝ որպէս հայակերտումի եւ մարդակերտումի դարբնոց՝ վեր առաւ Մելգոնեանի բերած անփոխարինելի նպաստը հայապահպանութեան համար տարուող պայքարին եւ շեշտեց թէ ո՛չ ոք, ո՛չ մէկ կազմակերպութիւն իրաւունք ունի, Սփիւռքի ներկայ պայմաններուն մէջ, Մելգոնեանի նման դպրոց մը փակելու, ին՛չ ալ ըլլան պատճառները:*

*Խիստ խանդավառ եւ ուրախ մթնոլորտի մէջ բեմ հրաւիրուեցաւ Զոհրապ Շամմասեան, Մելգոնեան Սանուց Եւ Բարեկամներ Միութեան 2011 թուականի «Տարուան Մարդը», որպէսզի ընդունի իրեն համար պատրաստուած յատուկ յուշատախտակ մը հետեւեալ մակագրութեամբ.* «2011 MAN OF THE YEAR AWARD - Awarded to ZOHRAB SHAMASSIAN for his Leadership« Perseverance and Determined Effort to save and re-open Melkonian School in Cyprus»

*Ծափահարութիւններու տարափին տակ, Զոհրապին սրտի խօսքը յուզումնախառն էր բայց միեւնոյն ատեն վճռական՝ երբ ան լաւատեսութեամբ եւ հաւատքով յայտարարեց, թէ՝ կարելի չէ՛ Մելգոնեանը պահել փակ, անփառունակ, ամուլ ու ամայի վիճակի մէջ, թէ՝ Մելգոնեանը անպայմա՛ն պէտք է բացուի եւ պիտի բացուի մօտիկ ապագային....:*

*Երեկոն անցաւ, ինչպէս միշտ, խանդավառ եւ ուրախ մթնոլորտի մէջ: Համադամ ճաշեր, երգ, երաժշտութիւն, պար՝ բաղկացուցիչ տարրերն էին այս յաջող ձեռնարկին որ տեւեց մինչեւ առաւօտեան վաղ ժամերը:*

# ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 50-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

*Սփիւռքահայ բեմի բազմավաստակ բեմադրիչ, արուեստագէտ եւ թարգմանիչ Գրիգոր Սաթամեանի թատերական գործունէութեան 50 ամեակը պիտի նշուի յառաջիկայ Հոկտեմբերի 30ին:*

*Սոյն միջոցառումը նախաձեռնողն է Հ.Բ.Ը.Մ.ի շրջանային վարչութիւնը, որուն «Արտաւազդ» թատերախումբի շուրջ կէս դարեայ անխոնջ բեմադրիչը եղած է յոբելիար Գրիգոր Սաթամեան:*

*Այս առթիւ կազմուած է յոբելինական նախապատրաստական յանձնախումբ մը, պատշաճ շուքով նշելու սոյն իրադարձութիւնը:*

*Կ՚իմանանք թէ տօնախմբութեան խօսք պիտի առնէ նաեւ Լոնտոնի հայ գաղութի ծանօթ անձնաւորութիւններէն՝ Տիար Ասատուր Կիւզէլեան:*



# ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄՊԻՈՆԻ 30-ԱՄԵԱԿԸ ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

*Էն Արպըրի (Միշիկըն) համալսարանի հայոց պատմութեան Ալեք Մանուկեանի անուան ամբիոնը յառաջիկայ Հոկտեմբերի 14ին եւ 15ին, պիտի հանդիսաւորապէս նշէ իր հիմնադրութեան 30-ամեակը: Այս առթիւ նախաձեռնուած է շարք մը միջոցառումներուն մաս կը կազմեն ցուցահանդէս մը նուիրուած Միշիկընի համալսարանի գրադարանի հայկական բաժինին, հայկական ֆիլմերու ցուցադրութիւն մը համալսարանի թանգարանին եւ հանդիսասրահին մէջ, ինչպէս նաեւ սիմփոզիում մը «Հայաստանը՝ աշխարհի պատմութեան մէջ եւ աշխարհը հայոց պատմութեան մէջ» նիւթին շուրջ:*



### ՀԲԸՄ «ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ» ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

# ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՇՈՒՆՉ ՊԱՏԳԱՄՈՎ



Անուրանալի է, որ մեր լեզուն, կրօնքն ու աւանդութիւնները եղած են ամուր կռուաններ, որոնց կառչելով՝ յաջողած ենք գոյատեւել դարերու ընթացքին: Այս իրողութենէն մեկնած, ՀԲԸՄ Երուանդ Պապայեան« հիմնարկը, որպէս ազգային ինքնութեան եւ նկարագիրի կերտումի ծրագիր, «Ազգանուիրում»ի գործունէութիւնները յառաջ կը տանի՝ կարգախօս ունենալով «Աւանդութիւններու հիմքով կերտել պայծառ ապագայ»ն:

Մեր գերագոյն նպատակն է՝ պատրաստել իրենց ազգութեամբ հպարտ, գիտակից եւ գործունեայ երիտասարդներ, որոնք քաջածանօթ ըլլան մեր հարուստ մշակոյթին ու դարաւոր աւանդութիւններուն եւ ըլլան միշտ պատրաստ՝ հպարտութեամբ եւ սիրով ծառայելու իրենց շրջապատին:

Մեր կարգախօսին հետեւելով, Յուլիս ամսուան մեր հանդիպումը ունէր երկու նպատակ եւ համապատասխան գործունէութիւններ: Առաջին բաժինով գնահատուեցան «Ազգանուիրում» ծրագիրի մասնակիցներէն չորս տիպար եւ խոստմնալից աշակերտներ, որոնք այս տարի շրջանաւարտ եղան միջնակարգ կամ երկրորդական վարժարաններէ: Դոկտ. Սիլվա Գարայեան բարի գալուստի խօսքէն ետք ծանօթացուց զանոնք՝ թուելով անոնց բարեմասնութիւններն ու փայլուն յաջողութիւնները: Անոնք ընդունուեցան ջերմ ծափողջիւններով եւ գնահատուեցան յուշանուէրներով: Կը ներկայացնենք իւրաքանչիւրին մասին հակիրճ ծանօթութիւններ.

- Նայիրի Փարթամեան այս տարի շրջանաւարտ եղաւ ՀԲԸՄի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանէն՝ պատուոյ բարձր յիշատակութեամբ: Ան արժանացած էր «Սալութութորիըն» պատուաբեր տիտղոսին եւ այդ յանգամանքով իր իմաստալից եւ ներշնչող պատգամը փոխանցեց ամավերջի հանդէսին: Նայիրին արժանացաւ նաեւ թուաբանութեան մարզի եւ SAT քննութեանց բարձրագոյն նիշը ապահովողի մրցանակներուն: Աւելին, ինչպէս յաճախ, ամավերջի հանդիսութեան ընթացքին ան ձեռնհասօրէն դաշնակի վրայ ընկերացաւ երգչախումբին: Նայիրին իր ուսումը պիտի շարունակէ Քալիֆորնիոյ համալսարանի Ըրվայնի մասնաճիւղին մէջ, եւ կը ծրագրէ մասնագիտանալ կենսոլորտային գիտութեան բնագաւառին մէջ:

- Քրիսթին Քէշիշեան այս տարի շրջանաւարտ եղաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ալֆրետ եւ Մարկըրիթ Յովսէփեան միջնակարգ վարժարանէն՝ պատուոյ բարձր յիշատակութեամբ՝ ստանալով բազմաթիւ մրցանակներ եւ հանդիսանալով իր դասարանին «Վելիտիքթորիըն»ը: Իր աշակերտութեան շրջանին, Քրիսթին միշտ եղած է տիպար եւ յառաջադէմ աշակերտուհի՝ արժանանալով բազմաթիւ մրցանակներու: Ան իր ուսումը պիտի շարունակէ ՀԲԸՄի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանէն ներս:

- Միշել Կանեան այս տարի շրջանաւարտ եղաւ Կլենտէյլի «Ինքարնէյշըն Փերիշ» վարժարանէն՝ պատուոյ բարձր յիշատակութեամբ՝ ստանալով Նախագահի մրցանակը, ինչպէս նաեւ արուեստի, երաժշտութեան եւ տիպար քաղաքացիութեան մարզերու մրցանակները: Վերջերս իր հայաշունչ մէկ պաստառին համար, ան արժանացաւ Լոս Անճելըս գաւառի կրթական վարչութեան գնահատագիրին: Միշել նաեւ մասնաւոր ատակութիւն ունի երաժշտութեան մէջ եւ փոքր տարիքէն հետեւած է դաշնամուրի դասերու: Ան իր ուսումը պիտի շարունակէ ՀԲԸՄի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանէն ներս:

- Փիթըր Տէր Պետրոսեան շրջանաւարտ եղաւ ՀԲԸՄի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի հինգերորդ կարգէն՝ պատուոյ բարձր յիշատակութեամբ, եւ արժանացաւ «Սքալըր» մրցանակին ու հայերէնի մրցանակին: Ան մասնակցեցաւ նաեւ «Նաշընըլ եանկ սքալըրզ» ծրագիրին՝ ստանալով «Քրիէյթիւ քընսթրաքշըն» մրցանակին: Փիթըր, որպէս տաղանդաւոր աշակերտ, փոքր տարիքէն հետեւած է դաշնամուրի դասերու եւ մասնակցած Հայ արուեստներու միութեան մրցումներուն: Ան իր ուսումը պիտի շարունակէ ՀԲԸՄի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանէն ներս:

Յայտագիրին երկրորդ բաժինը յատկացուած էր Յիսուսի Այլակերպութեան եւ Վարդավառի տօնին: Այս առիթով հրաւիրուած էր հայերէն լեզուի վաստակաւոր ուսուցչուհի, ՀԲԸՄի Լեւոն Կ. Նազարեան վարժարանի երկարամեայ մանկապարտիզպանուհի, իսկ այժմ՝ Հայ Քոյրերու վարժարանի հայերէնի դասատու Մարօ Գույումճեանը: Իբրեւ փորձառու ուսուցչուհի, ան իր հաճակրելի եւ դիւրայարդ ոճով առաջին իսկ վայրկեանէն գրաւեց աշակերտներուն ուշադրութիւնը: Ան նիւթը բաժնած էր երկու մասերու. նախ խօսեցաւ Յիսուսի Այլակերպութեան մասին՝ տալով ամփոփ բացատրութիւններ, այնպէս ինչպէս ներկայացուած է Նոր Կտակարանին մէջ, աւետարանիչներուն կողմէ: Ապա շատ պարզ ու հասկնալի ոճով մանրամասնօրէն բացատրեց Վարդավառի տօնին ծագումը եւ յստակօրէն նկարագրեց, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կը տօնենք զայն: Այսպէս, Մ. Գույումճեան բացատրեց աշակերտներուն, թէ Վարդավառը հայոց հեթանոսական կրօնքէն մնացած չաստուածուհի Աստղիկին նուիրուած տօն է: Աստղիկը կը համարուէր գեղեցկութեան, ջուրի եւ սիրոյ չաստուածուհի: Անոր նուիրուած աղօթքները կամ մաղթանքները նուիրուած էին ջուրին՝ յօգուտ մշակելի դաշտերուն, պտղատու հողերուն եւ այգիներուն: Գույումճեան աւելցուց նաեւ, թէ բերքահաւաքի շրջանին գոհաբանութեան հանդէսներ կը կազմակերպէին գետերու կամ աղբիւրներու մօտ, առ ի երախտագիտութիւն ստացուած բերք ու բարիքին. ուրախութեան համար աղաւնիներ կը թռցնէին, ծաղիկներով վարդափունջեր եւ հասկեր կը պատրաստէին եւ կը նուիրէին իրարու, ապա հաճելի ջրախաղերով կը զուարճանային: Մարօ Գույումճեան, իր խօսքը գործի վերածելով՝ խնամքով պատրաստած էր աշխանտանքային վարժութիւններու թերթիկներ, որոնց նպատակն էր աշակերտներուն միտքին մէջ ամրապնդել այն գիտելիքներն ու տեղեկութիւնները, զորս աշակերտները սորված էին: Աշակերտները մեծ հետաքրքրութեամբ եւ խանդավառութեամբ պզտիկ խումբերով աշխատեցան հաճելի բառախաղերու վրայ, փորձեցին եւ յաջողեցան գտնել պահուած բառերը, որոնց նախապէս ծանօթացած էին: Աւելին, նկատի ունենալով, որ Վարդավառը նաեւ ծաղիկներու տօն է, շնորհիւ Մ. Գույումճեանի պատրաստած հետաքրքրական ձեռային աշխատանքին, աշակերտները սորվեցան զանազան ծաղիկներու հայերէն անունները եւ պատրաստեցին գունաւոր գրքոյկներ իրենց ներկած ծաղիկներով: Այսպիսով, աշակերտները ունեցան հաճելի եւ օգտակար փորձառութիւնը՝ իրենց առաջին գիրքը կազմելու:

Աշակերտներուն խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ Մ. Գույումճեան, գնահատելու համար անոնց աշխատանքն ու գործօն մասնակցութիւնը, իրենց յանձնեց իր պատրաստած սիրուն նուէրները, հաճելի եւ ուրախ մթնոլորտի մէջ: Ան իր այս շահեկան ելոյթը եզրափակեց հետեւեալ պատգամով. «Ըլլալ միշտ երախտագէտ ազգին, եկեղեցիին եւ հայ դպրոցին»:

Վերջապէս, աշակերտներուն կողմէ անձկութեամբ սպասուած Վարդավառի յատուկ ջրախաղը տեղի ունեցաւ ՀԲԸՄի Փասատինայի մշակութային կեդրոնի շրջափակին մէջ: Աշակերտները մեծապէս զուարճացան՝ իրարու վրայ ջուրով լեցուած գունաւոր փուչիկներ նետելով:

Որքան ուսողական, նոյնքա՛ն հաճելի այս միջոցառումին իբրեւ արդիւնք, Վարդավառը, որ ընդհանրապէս ջրախաղի հետ առնչ-

Շար.ը էջ 13



Massis Weekly

Volume 31, No. 29 Saturday, AUGUST 20, 2011

# Plaintiffs Score Early Victory Against Turkish Banks in Armenian Genocide Lawsuit



LOS ANGELES -- On August 2, 2011, a U.S. federal district court in Los Angeles handed Armenian plaintiffs an early victory in what will surely be a difficult legal battle over reparations for land seized from Armenians in Turkey during the Armenian Genocide (Alex Bakalian et. al vs. Republic of Turkey, the Central Bank of Turkey, and T.C. Ziraat Bankasi et. al, Case Number 2:10-CV-09596, December 15, 2010). Nearly eight months after the complaint was filed, the court determined that all three defendants, in a first-of-its-kind lawsuit in the United States, had been lawfully served.

The lawsuit, filed by descendants of Armenian Genocide victims, accuses the defendants of stealing and then profiting from land that was illegally seized during the Armenian Genocide, when the Ottoman Turks drove Armenians from the Adana region of southern Turkey. The property at issue in the lawsuit is currently part of a strategic U.S. airbase in southern Turkey.

Representing the plaintiffs are the Yeghiayan Law Firm in Glendale, Schwarcz, Rimberg, Boyd & Rader, LLP in Los Angeles and Michael Bazyler from Chapman University School of Law in Orange.

The plaintiffs have spent recent months attempting to serve all the defendants, and then to have the court affirm their service efforts. In the August 2 order, the court denied Central Bank of Turkey and Ziraat Bank's motion to dismiss the complaint for insufficient service of process. The court acknowledged that the plaintiffs presented "credible evidence that their process servers made several attempts to serve the bank defendants at addresses in "New York City... [and] were repeatedly denied access to the buildings and [were even]...misdirected as to Ziraat Bank's actual location."

The court further found that the banks' security guards had "engaged in behavior apparently designed to

Continued on page 2

# Georgetown University Professors: Treat Nagorno-Karabakh Like a Free Country

NEW YORK -- Writing in The New York Times, Daniel L. Bynam of the Brookings Institution and author Charles King, both of whom teach at Georgetown, point out that phantom states are usually the product of conflict, often between neighboring states. Their existence, however, also makes them sources of future conflict, as the breakaway states argue for their right to determine their own futures while the states they broke away from push the primacy of territorial integrity.

A more productive approach to such breakaway countries, Bynam and King argue, is to engage them both politically and economically as though they were legally independent - in other words, recognize their independence in fact while not necessarily doing so officially.

They argue that conditions are ripe for a similar solution to the standoff over Nagorno-Karabakh. By offering to protect Karabakh's territory and establishing trade and political ties while stopping short of formal recognition, and by engaging both the Armenian and Azeri governments at the same time, Western nations, along with Russia in this case, could provide Nagorno-Karabakh the space it needs to develop stable democratic institutions and strengthen its economy. The ball would then be in Azerbaijan's court, where it would have to ask the question the Chinese Communists asked themselves concerning Taiwan: Is pushing for absolute sovereignty over our entire former territory worth risking all that could be gained from engagement?

# Armenian Opposition Continues Dialogue with Government



**Representatives of the opposition Armenian National Congress heading to meeting with government negotiators**

YEREVAN -- The opposition Armenian National Congress (ANC) chose to continue to negotiate with the government on Tuesday despite its threats to halt the dialogue because of the arrest and prosecution of several ANC activists.

Representatives of the opposition group and Armenia's governing coalition held their fifth round of negotiations which they said focused on the August 9 violent incident in Yerevan that led to the arrest of seven young members of the opposition alliance.

Four of them were set free late last week. But the three others were remanded in pre-trial detention on charges of assaulting police officers patrolling streets of Yerevan.

In a joint statement read out by Levon Zurabian, the chief ANC negotiator, after the two-hour meeting, the two sides said they discussed the matter and "tentatively" agreed to continue that discussion at their next talks scheduled for Friday.

"We also agreed to refrain from commenting on details of our discussion of the incident for now," said the statement.

Zurabian refused to answer questions from journalists, saying that is also part of the agreement reached by the parties.

ANC spokesman Arman Musinian on Monday described the continuing detention of three oif its activists as an "extremely serious obstacle" to further talks between the two sides. He said the opposition bloc could pull out of the dialogue if the activists are not set free by Tuesday morning.

According to Hakob Badalian, a media columnist and political com-

Continued on page 3

# Vahan Shirkhanyan: Only Change of System Will Lead the Country Out of the Critical Socio-Economic Situation



YEREVAN -- Armenia's former Deputy Defense Minister and member of Social Democrat Hunchakian Party Central Committee Vahan Shirkhanyan answering questions of the press this week stated that Armenia faces a critical situation where a clash of political personalities is constant, as opposed to competing ideologies and programs which ultimately contribute to a country's political and economic health.

The Hunchakian party sees the solutions to Armenia's problems not in the personalities change, but in the change of the whole system. Mr. Shirkhanyan thinks of two key tasks: first, the recognition of independence of the existing borders of the NKR, the second is to overcome the 20-year-old socio-economic crisis, through legal and economic reforms for the improvement of socio-economic conditions of the Armenia's populace. He underlined that to resolve social and economic problems; Armenia must reject the liberal formula and take up a social democrat model, entirely altering the government system.

This political deficiency has led to two wings of liberal ideology to negotiate not on the core issues of concern that need to be addressed for a better future of Armenia, but rather on who will take the helm and continue the current socio-economic policies of the past 20 years. "Political struggle is the struggle of ideas. There is, however, no struggle of ideas between authorities and Armenian National Congress (ANC), it's a battle of personalities," Shirkhanyan said. The current negotiations between the ANC and the authorities will not change the system, that is, lead the country out of the critical socio-economic situation which it faces today.

Shirkhanyan also excluded the possibility of pre-term presidential election in Armenia. "There is no prerequi-

Continued on page 2

## SDHP Sarkis Dkhruni Youth Union Calls on Yerevan Mayor to Stop Removal of Kiosks

YEREVAN -- The Sarkis Dkhruni youth union of the Hunchakian party addressed an open letter to Yerevan Mayor Karen Karapetyan, calling on him to stop the removal of commercial kiosks.

In their letter, the union members point out that the Yerevan mayor's relevant decision will add to social tension in Armenia. The removal process is accompanied by "police terror" and "outrageous behavior" shown by some of the Yerevan city hall officials. "You state that the stalls spoil the Yerevan city's appearance. Yes, we agree. However, should you begin your struggle for the city's appearance with the poorest sections of the population?"

"Do not the previously constructed ugly 'elite buildings' spoil Yerevan's appearance? They have never had anything in common with the city's architecture nor will they ever have. If you and your staff have set yourselves a task of improving Yerevan's appearance, you could begin with these buildings," the letter says.

The authors call on the Yerevan mayor to stop the "campaign that will deprive another several thousand people of their daily bread. They, willingly or unwillingly, will start thinking of emigrating. And no one needs Yerevan without residents."

## Gallup Poll: 75% of Armenias Have Strong Pro-Russian Sentiment

YEREVAN -- Three in four people in Armenia approve of the track record of Russia's current leadership, making it the fifth most pro-Russian country in the world, according to an opinion poll released over the weekend.

The poll conducted by Gallup in 104 countries last year shows that only 7 percent of Armenians are critical of the Kremlin's leadership, with another 17 percent being undecided. The remaining 75 percent positively assess policies pursued by President Dmitry Medvedev and Prime Minister Vladimir Putin, the U.S. pollster said.

According to Gallup, Moscow enjoys higher approval ratings in only four other countries surveyed: Tajikistan, Kyrgyzstan, Mali and Uzebkistan.

The findings of the survey are in tune with strong pro-Russian sentiment that has traditionally existed in Armenia. Despite increasingly favoring closer ties with the West, many Armenians continue to regard Russia as a guarantor of their country's security. The unresolved Nagorno-Karabakh conflict and historically strained relations with neighboring Turkey are seen as key reasons for that.

The Gallup poll also found strong pro-Russian sympathies in much of the former Soviet Union, including Armenia's arch-foe Azerbaijan, where 54 percent of respondents thought well of the Putin-Medvedev duo's peformance.

"Russia's sphere of influence continues to be most visible in former Soviet countries, where people are most likely to be familiar with the Kremlin's leadership and a median of 61 percent said they approved," the pollster said in an explanatory note.

Georgia is a rare exception to this rule due to its bitter relationship with Russia. As much as 76 percent of those polled there disapproved of the Russian leadership.

"The popularity that Russia's leadership enjoys in several countries in Central Asia and in the Caucasus has its roots in their shared history as former Soviet republics," said Gallup. "But the high approval also reflects how dependent many residents of these counties are on remittances from Russia."

"In Tajikistan, where approval of Russia's leadership is highest, the International Monetary Fund estimates that these remittances accounted for 50 percent of the country's GDP in 2008," it added.

In Armenia, that proportion stood at 13 percent last year. Government data shows that around 80 percent of the 2010 cash remittances totalling at least $1.3 billion came from Russia, which is home to hundreds of thousands of Armenian migrant workers.

## Karabakh Armed Forces Acquire New Weapons and Continue Military Buildup



STEPANAKERT -- Nagorno-Karabakh armed forces have acquired significant amounts of new weapons this year and will continue the military buildup in the months to come, according to commander-in-chief Lieutenant-General Movses Hakobian who said the "military potential" of his troops grew by 20 percent in the first half of 2011.

"During this period, the qualitative and quantitative state of our weapons and military hardware changed quite a lot," Hakobian told a news conference in Stepanakert. "Quite serious reforms were carried out with the restructuring of two army brigades.

"We re-armed one artillery regiment with new systems. The anti-tank and air-defense means of a dozen battalions were enhanced."

"And this year we will receive more tanks — two more divisions — and some of the weaponry of the army's air-defense system will be replaced," he said.

Hakobian, who commanded some Karabakh Armenian units during the 1991-1994 war with Azerbaijan, gave no other details of the buildup.

Azerbaijan's leaders regularly threaten to forcibly win back Karabakh and Armenian-controlled territories surrounding it if the long-running Armenian-Azerbaijani peace talks yield no results acceptable to Baku. The Azerbaijani government plans to boost military spending to $3.3 billion this year, up from $2.15 a year ago and just $160 million in 2003.

Echoing earlier statements military officials in Stepanakert and Yerevan, Hakobian insisted that the Armenian side is undaunted by the Azerbaijani military buildup. He said the Azerbaijani army will suffer another defeat if it attempts to end the conflict by force.

Still, the Karabakh general did not rule out the possibility of renewed war. "In my view, if Azerbaijan thinks that it can solve the Artsakh (Karabakh) problem by military means, the resumption of hostilities will be possible," he said.

Hakobian noted in that context that instances of Azerbaijani troops opening small arms fire on Karabakh Armenian positions have increased drastically this year. He also spoke of their growing recourse to rocket-propelled grenades.

"They fired at us from grenade launchers twice last year and ten times already this year," he said.

Hakobian said last December that the Karabakh military has strengthened its defense fortifications along the entire "line of contact" with Azerbaijani forces lying east and north of the disputed territory. Ohanian likewise stated last year that those positions have been beefed up significantly.

The Karabakh military chief was also asked to comment on the increasingly publicized problem of non-combat deaths among soldiers. The Karabakh army was rocked last year by two separate shooting sprees that left ten

## Plaintiffs Score Early Victory Against Turkish Banks

**Continued from page 1**

thwart service of process." The banks did not deny having actual knowledge of the pending lawsuit, and thus the court ordered them to serve a responsive pleading to the complaint by August 19.

The court additionally recognize that the Republic of Turkey had also been recently served with the complaint through diplomatic channels—a lengthy process involving high-level contacts between the U.S. Embassy in Ankara, Turkey, and the Turkish Foreign Ministry—and must also file papers responding to the complaint by August 19.

"From the outset, the banks have sought to make it as difficult as possible to litigate this lawsuit," says Vartkes Yeghiayan with the Yeghiayan Law Firm. "Finally, after months of maneuvering and numerous attempts to evade service, the U.S. federal court has required all three defendants to respond to the Armenians' complaint."

## Only Change of System Will Lead the Country Out

**Continued from page1**

site, and the authorities do not face an immediate tangible "political crisis, which brings about resignations, the Armenian authorities' motives are obvious; they have actually strengthened their hand by being receptive to negotiations." The authorities entered into a dialogue because a segment of opposition that was struggling in the streets. The authorities were able to persuade this segment into negotiations, which is without a doubt politically beneficial to the authorities. Yet, he finds it difficult to explain the reasons for the ANC's consent to start and take part in these negotiations.

massispost.com
daily news updates

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

# 4th Annual Armenian Identity Festival in Pasadena



PASADENA -- The 4th Annual Armenian Identity Festival took place on Sunday July 31st, from noon to 8:00 p.m. at Pasadena's Victory Park. The 4th Annual Armenian Identity Festival was arranged by the Armenian Community Coalition. Appointed as master of ceremony was Mary Agulian, who enthusiastically communicated with the patrons of the event. The success of this year's festival was calculated by attendees reaching over 3,000.

The festivities kicked off at 2pm with the presentation of the colors by members of the United States Marine Corps. Ara Sahagian did the honors of singing both the American and Armenian national anthems. To Celebrate Pasadena's 125th Anniversary city dignitaries, including Pasadena Mayor Bill Bogaard, Pasadena Police Chief Phillip Sanchez and wife Debora, Pasadena City Councilmember Gene Masuda, PUSD Board member Ramon Miramantes, Robin Salazar, and ACC Chairman Khatchik "Chris" Chahinian sliced a celebratory cake to honor Pasadena. Prior to cutting the cake Ara Sahagian also had the honor of singing "Happy Birthday, Pasadena."

Live musical entertainment was provided by Sahag Sislian, Kevork Chakmacyan, Nshan Tchaghatsbanian and Khatchig Nahabedian throughout the day. People enjoyed the ethnic and local foods, while children participated in various activities. There were many exhibitions, including classic cars and local organizational booths. Nor Serount children's Dance group, choreographed by Lilian, presented Armenian folk dances, and the Macarena. As the day progressed, Hye Kempo karate students performed.

Part of the festivities included a raffle for both a watch and a gold pendant; the watch was donated by Tic-Time, of Glendale Gallery. The gold and diamond pendant donated by Albert Tchoukadarian of Noble Jewelers in Monrovia was the grand prize of the raffle. Congratulations to both winners, the Grand Prize winner was Sarkis Sahagian of Pasadena.

On behalf of the Armenian Community Coalition, Chairman Khatchik "Chris" Chahinian presented two



Pasadena Mayor Bill Bogaard

plaques of appreciation. The first plaque was presented to Mayor Bill Bogaard and the other to the United States Marine Corps, in appreciation for their service to the USA.

The Armenian Community Coalition is working hard to commission and bestow a Genocide Monument in the city of Pasadena, in honor of 1915 Genocide victims. For this project, six




Pasadena Fire Department members and Armenian Community Coalition representatives

artists displayed and presented designs for the proposed monument. A petition campaign has begun to collect signatures to encourage the placement of a genocide monument. The Mayor, Councilman Masuda, and the Police Chief were among the first to sign the monument petition.

The Armenian Community Coalition of Pasadena is composed of schools, churches, and cultural organizations. Its mission is to bring the Armenian community together and work with other public groups to improve education, increase employment opportunities, and enhance living conditions in Pasadena.

# Church with Armenian Inscriptions Discovered in Turkey



YEREVAN.- An Armenian expedition group has discovered a church with Armenian inscriptions in Turkey during research in the territory of Western Armenia (present day Turkey).

"We, jointly with expert in Turkish studies Anush Hovhanisyan, studied territory of Hamshen, Dersim, traditional musical instruments, songs, dances, folklore, fairy tales, proverbs," ethnography expert Hranush Kharatyan told journalists on Wednesday.

The Armenian musicians also gave there concerts within the framework of festivals organized in Dersim province of Turkey. The local residents said "their culture have disappeared since Armenians left these lands".

The expedition was funded by authorities of France's Rhone-Alpes region and was supported by Turkish "Anadolu Kultur" organization.

# Opposition Continues Dialogue with Government

**Continued from page 1**

mentator, the decision to continue the dialogue heralds a major shift in the ANC's stance. He argued that the opposition bloc has previously refused to engage in direct contacts with the government before the release of all individuals regarded by it as political prisoners.

"In effect, the Congress is really retreating from its earlier stance … There are again political prisoners in Armenia but the Congress continues to negotiate," Badalian told RFE/RL's Armenian service.

Badalian claimed that the Congress is also backtracking on its repeated assurances that the dialogue will be transparent. "The meetings seem to be entering some closed cycle that effectively contradicts the statements about open dialogue that were made by the ANC," he said.

Meanwhile, the Armenian police brought criminal charges against three of the four freed oppositionists. They carry up to five years' imprisonment.

The most serious accusations have been leveled against Tigran Arakelian, one of the three ANC activists remaining in jail. Arakelian will face up to 10 years in prison if found guilty.

Lawyers for the three detainees have asked Armenia's Court of Appeals to overturn a lower court ruling that allowed the police to keep their clients under arrest for up to two months.

The oppositionists say they were beaten up and arrested after trying to stop a police patrol arbitrarily searching another young man in downtown Yerevan. The police insist, however, that the seven men were arrested for insulting and attacking the policemen.

Davit Harutiunian, who heads the ruling coalition's negotiating team, said last week that he is inclined to trust in the police version of events. He stood by this statement on Tuesday.

Harutiunian also told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) that his delegation has prepared a 130-page written response to ANC demands for the conduct of early elections. But he said it was not discussed at Tuesday's meeting.

The ANC representatives sought to substantiate those demands with an 85-page document that was submitted at their previous meeting with the coalition negotiators held on August 9, just hours before the Yerevan incident.

# Land and Culture Organization Historical Renovation Projects 2011





YEREVAN -- This summer, Land and Culture Organization/Organisation Terre et Culture (LCO/OTC) volunteers headed off to two different campaign sites. One group of volunteers went to north to the Shirakamut village, near the epicenter of the 1988 earthquake, to work on the renovation of the historic 7th Century Tchitchkhanavank Monastery, and another group of volunteers went south to Yeghvard, on the border of the liberated territories of Artsakh, to finalize work on the 17th Century Sourp Astvatzatzin Church project. Throughout July and August, over 60 volunteers were in Shirakamut, Yeghvard, as well as in Goris.

OTC is participating in a joint venture project with the sister cities of Vienne, France and Goris, Armenia renovating the 18th Century Sourp Astvatzatzin Church near the pagan era caves in Old Goris. Non-Armenian and Armenian volunteers from the Vienne community and local youth from Goris have committed themselves to this project.

The volunteers from Armenia, Canada, England, France, Nagorno-Karabakh, Syria, and the United States were hard at work at these different sites clearing, digging, and excavating, including discovering several ancient artifacts and human remains at the Tchitchanavank site which were turned over to the archaeological experts for review. During the campaign, the villages become energized by the group and renovation project. Local children join in the work and villagers express their appreciation to LCO/OTC and the volunteers for their dedication to these projects for their community.

During off work hours, the group mingled with each other and locals, explored the countryside, and went on typical and atypical excursions throughout Armenia and Nagorno-Karabakh, including viewing prior completed LCO/OTC projects. This not only gives them a sense of Armenia and its history, but an appreciation and inspiration for the work they were engaged in. This unique, off the tourist path, experience gave volunteers an opportunity to live the rural Armenian life and participate in preserving our ancient heritage.

In its 34th year, LCO/OTC is committed to the mission of preserving ancient Armenian historical sites. All projects are overseen and coordinated with local Armenian archaeologists, historical architects, and experts to ensure that the renovation is conducted properly and restoring the site to its original design, including using as many of the remaining stones. Renovation projects take four to five years to complete.

For over 30 years, LCO has been one of the earliest volunteers groups in Armenia and Karabakh working to restore, renovate, and rejuvenate the historical monuments and sites of our nation. It has performed this mission through its summer campaigns, by volunteers of every age from the Diaspora and Armenia. To help our mission or join in our summer volunteer program, you may reach us at www.lcousa.org.

# Dr. Sebouh D. Aslanian to Speak on New Julfa Armenians at Harvard University

Dr. Sebouh D. Aslanian, the newly-appointed Richard Hovannisian Term Chair of Modern Armenian History, established by the Armenian Educational Foundation at UCLA, will speak on Wednesday, September 14, at 8:00 p.m., at Harvard University's Center for Government and International Studies, Auditorium S010, 1730 Cambridge St., Cambridge, MA. Aslanian's lecture, "From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa," will draw on his recently-published book of the same name, issued by the University of California Press.

Aslanian's lecture is co-sponsored by the Mashtots Chair in Armenian Studies at Harvard University, the Department of Near Eastern Languages and Civilizations at Harvard, the Davis Center for Russian and Eurasian Studies at Harvard, the Harvard Armenian Society, the Zoryan Institute for Contemporary Armenian Research and Documentation, and the National Association for Armenian Studies and Research (NAASR). The lecture will be Aslanian's first since his appointment to the Hovannisian Chair at UCLA.

Drawing on a rich trove of documents, including correspondence not seen for 300 years, Aslanian's groundbreaking study From the Indian Ocean to the Mediterranean explores the emergence and growth of a remarkable global trade network operated by Armenian silk merchants from a small outpost in the Persian Empire. Based in New Julfa, Isfahan, in what is now Iran, these merchants operated a network of commercial settlements that stretched from London and



Amsterdam to Manila and Acapulco.

Aslanian brings to light the trans-imperial cosmopolitan world of the New Julfans, the effects of long distance trade on the organization of community life, the ethos of trust and cooperation that existed among merchants, and the importance of information networks and communication in the operation of early modern mercantile communities.

Prof. George Bournoutian of Iona College has praised From the Indian Ocean to the Mediterranean as "the most researched and original work" on the subject that "exceeds, by far, all previous scholarship on the Armenian merchants of New Julfa." The book has been selected by the Committee of the "California World History Library" as the first book to appear in their new series, "Author's Imprint," that celebrates and recognizes "exceptional scholarship by first-time authors."

Aslanian has previously taught in the department of history at CSU-Long Beach as an Assistant Professor in the fall of 2010 after serving a year at Cornell University as a Mellon Foundation Postdoctoral fellow in world history. He received his Ph.D. (with distinction) from Columbia University in 2007. Aslanian specializes in early modern world and Armenian history and is the author of numerous articles in peer reviewed journals such as the Journal of World History, the Journal of the Social and Economic History of the Orient, the Journal of Global History, and Diaspora: A Journal of Transnational Studies.

From the Indian Ocean to the Mediterranean will be on sale at the talk and available for signing by the author. Limited free parking will be available at Harvard's Broadway Garage (7 Felton St.) from 7:00 to 10:00 p.m. (Attendees must mention their attendance at the Aslanian lecture to the parking attendant.)

More information on Aslanian's lecture may be had by calling NAASR at 617-489-1610 or e-mailing e-mail at hq@naasr.org.

# AMAA James G. Jameson Essay Contest Open to High School and College Students

The Armenian Missionary Association of America (AMAA) has announced it will once again sponsor the James G. Jameson Essay Contest. Topics should touch upon some aspect of Armenian heritage such as religion, literature, language, history, culture, geography, economy or history.

Awards will be made in two categories: High School contestants and College/University contestants. The deadline for entries is SEPTEMBER 1, 2011.

All Armenian or part-Armenian students from North America are eligible. Only unpublished entries will be accepted. The winner in each category will be awarded $500.00, provided from the income of a special fund established by Mr. & Mrs. James G. Jameson of Brookline, MA.

The essays should be written in English and have a length of 1,000 to 2,000 words. A contestant is allowed no more than one entry per year, and only one member of a family may receive an award in a five-year period. If no submitted essay is considered sufficiently meritorious, no award will be granted that year.

Entries and/or inquiries should be directed to:
James G. Jameson Essay Contest
Armenian Missionary Association of America, Inc.
31 West Century Road
Paramus, NJ 07652

Հայ news am

# «ՓՈՔՐԻԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ» 15 ՏԱՐԵԿԱՆ









Կորսուած հայրենիքի փոխարէն հայը նախ կերտեց խորան՝ աղօթքի միջոցով Աստծոյ հետ սրտաբաց զրոյցի նստելու, ապա շինեց դպրոց՝ իր մանուկներին մեսրոպաշունչ հայոց լեզուն փոխանցելու...

*Փետրուարեան պարզ ու պայծառ մի առաւօտ, երբ օրը, քնից նոր արթնացած մանկան պէս, արեւի կենսաբեր շողերի ներքոյ ժպտում էր աշխարհին, համայնքում հիւրընկալօրէն իր դռները բացեց եւ հայ մանուկներին իր գիրկը կանչեց կրթական մի հաստատութիւն, ուր նրանց սպասում էր լուսաւոր ու պայծառ մի ընդարձակ սրահ՝ պատերն ամբողջապէս նկարազարդուած մանկական հեքիաթների հերոսների կերպարներով, մի գեղեցիկ ու գողտրիկ պարտէզ՝ խնամքով աճեցուած թփերով ու երփներանգ ծաղիկներով եւ վերջապէս մի ընդարձակ դասասենեակ, ուր դրուեց առաջին աշակերտական սեղանը, իսկ սեղանին՝ ցորենի հասկերի եօթ փունջ՝ եօթ խորհուրդ ու իմաստ արտայայտող անուանումով: Դրանք այն եօթ հիմնաքարերն էին, որոնք պիտի կրթէին ու զինէին հայ մանուկի միտքը, հոգին ու մարմինը: Այլ կերպ ասած՝ դա հենց նորաբաց այդ հաստատութեան «Հաւատոյ Հանգանակն» էր, որը կոչուած էր դաստիարակելու ու կրթելու հայ ազգին արժանաւոր զաւակներ՝ ի փառս հայ ժողովրդի ու հայրենիքի...*

*Փետրուարեան պարզ ու պայծառ առաւօտ ծնունդ առած այդ հաստատութիւնն անուանուեց՝ «Փոքրիկ Հրեշտակներ»:*

*Ծննդեան թուականը՝ Փետրուարի 5, 1996 թ.:*

*Առաքելութիւնը՝ ժառանգելու եւ շարունակելու մեր նախնիների թողած հարուստ ժառանգութիւնը, հնչեցնելու ու անաղարտ պահելու մեր մայրենին.*

*«Հաւատոյ հանգանակը»՝*

*Ազգութիւն, Հայոց Եկեղեցի, Հայոց Գիր, Հայրենիք Հայոց, Ազգային Երգ, Պար, Հայրենիք-Սփիւռք եւ Մարդասիրութիւն:*

*Այսօր արդէն «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցը 15 տարեկան է... 15 տարի շարունակ հայ մանուկի օրը «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցում բացւում է Տէրունական աղօթքով, «Ես Հայ եմ» երգման խօսքով: 15 տարի դպրոցն իրականացնում է կրթական եւ դաստիարակչական խնդիրներ՝ չորսից մինչեւ ութ տարեկան հայորդիների համար:*

*Թող յարատեւի ու բարգաւաճի «Փոքրիկ Հրեշտակներ»« դպրոցը:*

*Թող հայ մանուկները, որտեղ էլ լինեն՝ աճեն, մեծանան ու ժառանգեն անյիշելի դարերից եկած եւ դէպի աներեւակայելի դարերը գնացող, տառապած՝ բայց երջանիկ, փոքրաթիւ՝ բայց մեծ երազներ ունեցող երկիրը, որի պետական զինանշանի վրայ շողում են՝*

*Մեր հին ու նոր պատմութեան յաւերժական վկայ Արարատ լեռը.*

*Դեռեւս Նոյ Նահապետի ձեռքով տնկուած խաղողի իմաստուն ու յամառ որթը.*

*Խիզախութեան, ուժի եւ արիութեան խորհրդանիշ՝ Առիւծն ու Արծիւը.*

*Եւ Արեւը, մշտատեւ ու մշտագոյ այն Արեւը, որ շողերի տակ ապրե՛լ, ապրո՛ւմ է եւ յաւէրժ կ՚ապրի հայ ժողովուրդը...*

## ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՇԱԲԱԹՕՐԵԱԿ ՊՈՍԹՈՆԻ ՄԷՋ

*Յառաջիկայ Սեպտեմբերի 16ին Պոսթոնի Գլէրմօնթ Գօըլի Բլազայի մէջ, տեղի պիտի ունենայ գանատահայ ճանաչուած նկարիչ Եուսուֆ Գարշի դիմանկարներու ցուցահանդէսը, նշենք նաեւ որ Եուսուֆ Գարշի մնայուն հաւաքածոն նուիրուած է իր կնոջ էսթրէլլիթա Գարշի կողմէ:*

*Իսկ Սեպտեմբերի 17ին Ուաթըրթաունի նորաբաց Պէտուքեան կալերիին մէջ, ALMA-ի կազմակերպութեամբ տեղի պիտի ունենայ Գարշի ցուցահանդէսի բացման ընդունելութիւնը:*

## ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 8-էն*

*ուած է մեր միտքերուն մէջ, աւելի իմաստ եւ կարեւորութիւն ստացաւ, որովհետեւ աշակերտները ծանօթացան այս տօնի ծագումին, լաւապէս հասկցան անոր իմաստն ու անոր հետ կապուած աւանդութիւններուն եւ սովորութիւններուն կարեւորութիւնը: Օղակ մը եւս աւելցաւ «Ազգանուիրում» ծրագիրի գործունէութիւններու շղթային՝ ամրապնդելով մեր հաստատակամութիւնը՝ «Աւանդութիւններու հիմքով կերտելու համար պայծառ ապագայ»:*

**(Թղթակցութիւնը՝ ՀԲԸՄ «Երուանդ Պապայեան» հիմնարկէն)**






# ԳԱՐԵԳԻՆ Ա. ԵՐԱՆԱԼՈՅՍ ՎԵՀԱՓԱՌՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՇՈՏ ՎԱՒԵԱՆ**

*Մարգարէները Աստծուց ուղարկուած, Նրա խօսքը փոխանցող, Բարձրեալի կողմից որոշակի առաքելութեան կոչուած անձինք են: Նրանք ապագայի մարդիկ են, ում ասելիքն ու գործը մատչելի չեն շրջապատին, իսկ դրանք հասկանալու համար ժամանակ է պէտք: Այս է պատճառը, որ նրանք իրենց միջավայրում չեն հասկացւում, իսկ յաճախ էլ՝ ենթարկւում հալածանքների: «Մարգարէն յարգուած անձ է, բայց ոչ իր գաւառում, իր ազգատոհմի եւ իր տան մէջ», ասում է Յիսուս Քրիստոսը Աւետարանում: Մարգարէներ կամ մարգարէական ձիրք ունեցող մարդիկ կարող են լինել եւ մեր օրերում, պարզապէս «մեր տան մէջ» դժուար նկատելի են նրանք: Բայց պէտք է փորձել յայտնաբերել նրանց, որ առաջնորդեն մեզ… քանի որ ինչպէս մեր Տէրն է զգուշացրել. «Եթէ կոյրը կոյրին առաջնորդի, երկուսն էլ փոսը կ'ընկնեն»:*

*Ծագումով իտալացի, գրող, պատմաբան եւ գիտնական Ջովաննի Գուայտայի կարծիքով մեր եկեղեցու ու ժամանակակից պատմութեան մէջ մարգարէական դերակատարութիւն ունեցող անձ է Գարեգին Առաջին Վեհափառը: Լուսահոգի Հայրապետի մասին էլ հայրենիքում գնահատանքի խօսքերն այնքան առատ չէին, մինչդեռ արտերկրում մեծապէս արժեւորուեց նրայ վաստակը: Ամենայն հայոց կաթողիկոսի մեծութիւնը զգաց ամենայն հայոց բանաստեղծուհին՝ Սիլվա Կապուտիկեանը, ով այսպէս սգաց, երբ նա լքեց մեզ. «Ափսոս, հազար ափսոս, որ Հայոց 131րդ Կաթողիկոսն այդքան վաղաժամ հեռացաւ մեզանից, եւ այդքան ողբերգականօրէն ընդհատուեց նրա խօսքը, որ չքեղօրէն հնչում էր նրա շուրթերի վրայ՝ ցուցադրելով հայ լեզուի եւ հայ մտքի մեծագանձ կարողութիւնները: Բարեբախտութիւն է, որ մնացին Նրա ազգաշահ գործերը, բազում ու բազմազան աշխատութիւնները, նրա արտասովոր մտքի ու հայութեամբ բաբախող հոգու գրաւոր վկայութիւնները, որոնք շատ անելիք ունեն մեր այս նիւթապաշտ, օրէցօր հայաթափուող ու ոգեթափուող ժամանակներում:»*

*Երջանկայիշատակ Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսը ծնունդով Սիրիայի հայաբնակ Քեսապից էր, զաւակը՝ Յակոբ եւ Ովսաննա Սարգիսեանների: Աստուածաբանութիւնն ուսանել էր Օքսֆորդում՝ որտեղ պաշտպանեց իր հանրայայտ «Քաղկեդոնի ժողովը եւ Հայ եկեղեցին» անգլերէն աւարտաճառը: Իբրեւ Անթիլիասի դպրեվանքի տեսուչ, Իրանա-Հնդկաստանի, թէ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ, իմաստուն հովուապետի հովանու ներքոյ ամէնուրեք էին ազգային եկեղեցական կեանքը յաջողութիւններ արձանագրում: Իր ճիգերի շնորհիւ է կաթողիկոսութիւնը դառնում Եկեղեցիների համաշխարհային խորհուրդի անդամ, որտեղ նա ստանձնում է ղեկավար պաշտօններ: Որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս պաշտօնավարութեան իր տասնութ տարիներից տասնհինգը Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժուարին տարիներն էին, երբ Վեհափառն իր իմաստնութեամբ ու հեղինակութեամբ կարողացաւ (մեծապէս նպաստել) լիբանանահայութեանը կործանարար մարտահրաւէրներից զերծ պահելու գործին: Այդ տարիներին, ռմբակոծութիւնների ներքոյ մայրիների երկրի հայ գաղթօջախի կրօնական, ազգային, կրթական, մշակութային եւ շինարարական մարզերում կատարուեցին բազմաթիւ իրագործումներ, նոյնը տեղի ունեցաւ նաեւ անթիլիասապատկան միւս թեմերում: Համայնքներ այցելելիս Վեհափառն ամէնուրեք էր ջերմ ընդունելութիւն գտնում, իսկ Անթիլիասում խանդավառ ժողովուրդը ծաղիկներ էր փռում նրա ճանապարհին: Մեծ էր Վեհափառի հեղինակութիւնը, Նրա նկատմամբ յարգանքն ու համակրանքը նաեւ օտարազգի կրօնական թէ քաղաքական գործիչների մօտ, ինչը շահեկան էր խիստ եկեղեցուն ու ազգին: Միջեկեղեցական, միջկրօնական շարժումների ռահվիրաներից էր նա, քաջ գիտէր սակայն, որ ազգը եւս մարդու նման չի կարող մեկուսացուած մնալ, Նրա յորդորն էր «քայլ պահել աշխարհին հետ, առանց սակայն, մեր ճամբայէն դուրս գալու»:*

*Գործի, հաւատքի ու գաղափարի մարդ էր Վեհափառը, երբեք չէր ձգտում ձեռք բերել յատուկ դիրք կամ պաշտօն. «Միշտ ատել եմ յաջողութիւն ձեռք բելելու փառամոլական տենչը: Ես գտնում եմ, որ այն մարդու կոչման մահն իսկ է: Անհնար է ուրախութեամբ ծառայել, եթէ արարքներիդ մղիչն ու շարժառիթը հեղինակաւոր դիրք գրաւելու, իշխանութեան հասնելու ցանկութիւնն է, այլ ոչ թէ ներքին հոգեկան պահանջ», ասում էր նա: Այս մտածողութեանը խորթ Հայաստանի ղեկավարութիւնը ինչ-ինչ նպատակներից դրդուած ջանք չէր խնայում Գարեգին Երկրորդ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի՝ Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտօնում առաջադրման համար: Սակայն անելիքներն այնտեղ այնքան շատ էին, եւ անաւարտ գործեր էլ կային: Ազնիւ հոգի Վեհափառին վստահեցնում էին, թէ հայաստանցիներն իր կարիքն ունեն ու սպասում են գալստեանը: Բայց Վեհափառի Հայաստան գալը Բարձրեալի ծրագրերից էր, ինչը նաեւ վկայուեց մահուան տասնամեայ տարելիցի առթիւ գերապատուելի Խաժակ Աքեպիսկոպոս Պարսամեանի կողմից Մայր Տաճարում խօսուած քարոզի կարծես թէ երկնային ազդեցութեամբ հնչեցրած մէջբերուող հատուածում. «Պատմական խառը ժամանակներում Վեհափառ հայրապետը պատասխանեց Աստծոյ կանչին՝ գալով հովուելու իր հօտը՝ իբրեւ Ամենայն հայոց հայրապետ, եկաւ իր ծառայութիւնը բերելու իր ժողովրդին: Լուծը ծանր էր, սակայն յիշելով Մովսէսի պատգամը՝ ուղղուած Յիսուին, թէ՝ քա՛ջ եղիր, որովհետեւ Աստծոյ Հոգին քեզ հետ է, եկաւ լինելու քաջ հովիւ: Ներշնչուած Ս. Հոգով՝ շարունակեց հովուել իր հօտը, առաջնորդել դէպի Աղբիւրը Լոյսի: Համաշխարհային անձ է, համաշխարհային գիտակցութիւն եւ ներգործութիւն ունեցող անձ է Գարեգին Ա. Վեհափառ հայրապետը, որը խանդավառող ուժ դարձաւ տարբեր եկեղեցիների հաւատացեալների համար»:*

*Հեշտ չէր Վեհափառի համար աշխատել մի ժողովրդի մէջ, ով փաստօրէն միայն անունով է քրիստոնեայ, ուր իշխում է խորհրդային աթէիզմը, որտեղ առօրեական է խաբելու, կողոպտելու եւ այլ հակաաստուածաշնչական դրսեւորումներ, որտեղ ամբողջ հասարակութիւնն է հաշուի նստում «գողական գաղափարախօսութեան» չգրուած նորմերի հետ: Նա պէտք է զգար, որ իր հետ որեւէ առիթով հանդիպողներից միայն քչերն են պարզ սրտով գալիս, եւ որ իւրաքանչիւրն առաջնորդւում էր միայն իր շահով, Նա պիտի տեսնէր օրէցօր բնաւորուող նիւթապաշտութիւնն ու տմարդի չտեսութիւնը: Ու ցաւով պիտ ասէր, որ «շատ աւելի դիւրին է կառուցել այնտեղ, որտեղ ոչինչ չկայ, քան թէ վերականգնել խիստ խոցոտուած այնպիսի ժառանգութիւն, ինչպիսին Հայաստանն է»: Եւ չնայած անբարենպաստ այս պայմաններին Վեհափառը կարողացաւ տանել իր իսկ բնորոշումով «ծանրացած խաչը» եւ կաթողիկոսութեան փոքր ժամկէտում մեծ գործ կատարեց. ձեռնամուխ եղաւ բնակչութեան քրիստոնէական-ազգային գիտակցութեան ձեւաւորմանը, հիմնեց քարոզչական ու կրթական ինստիտուտներ, պատրաստեց երիտասարդ հոգեւորականներ, ձեւաւորեց Մայր Աթոռի կազմակերպչական կառուցուածքը, բացեց եկեղեցական թեմեր, նորոգեց ու կառուցեց տասնեակ եկեղեցիներ, հրատարակեց բազմաթիւ գրքեր, մեզ եւ աշխարհին ներկայացաւ քրիստոնէութեան ընդունման 1700ամեակի յաւակնոտ ծրագրով, աշխարհասփիւռ հանգրուաններում հովուեց վստահուած հօտը: Միջեկեղեցական ճանաչուած գործչի ու Նրա գիտաաստուածաբանական գրչի տարիների եռանդով քրիստոնեայ եկեղեցիների համաշխարհային ընտանիքում վերջնապէս ճանաչուեց մեր եկեղեցու առաքելական ծագումն ու բնոյթը, հարթուեցին բաժանարար տարաձայնութիւններ, էապէս բարձրացաւ մեր Եկեղեցու եւ ժողովրդի հեղինակութիւնը: Այդ նպատակներին միտուած Վեհափառի շատ ձեռնարկումներ բախւում էին հովուական գործելաոճին խորթ ու մտահորիզոնը կնունք-թաղում ծիսակատարութեամբ սահմանափակուած տեղի հոգեւորականութեան դիմադրութեանը, չնայած յետագայում այդպիսիք պիտի հաճոյքով օգտուէին արդէն գցուած կամուրջներից:*

*Աստուածատուր էին մեծ մտաւորականի ունակութիւններն ու կարողութիւնները, մեծ հռետորի տարբեր լիզուներով արտասանած խօսքը ոգեշնչում էին նոյնիսկ եկեղեցիների ու պետութիւնների առաջին դէմքերին: Յոյն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարքը պիտի երանի տար այն ժողովրդին, ով այդպիսի զաւակ ունի: Բախտաւորութիւն էր լինել Նրա գրուցակիցը, ով առաջնորդւում էր իր այս խօսքերով. «Մտածէ պահ մը, որ ըսածդ խօսքերը այնպէս ըլլան, որ քեզի վերադառնան ուրիշին պատճառուած երջանկութեան խնդութեամբը»: Շատերին էր գրաւում իր արտասովոր անձը. եւրոպացի արտ-գործնախարարը Թբիլիսի գործուղուելիս պիտի անշուշտ այցելէր Վեհափառին Էջմիածնում, քանի որ տարիներ առաջ առիթ էր եղել մէկ անգամ շփուել նրա հետ: Զօրաւոր էր միտքն այնքանով, որ եղած մայրենին չէր բաւարարում այտայայտուելու ու տեղում ծնւում էին նոր բառեր: Արժէ յիշել հայոց լեզուն հարստացուած շուրջ 1700 բառերից բաղկացած բառարանի գոյութեան մասին: Վեհափառի անհաւատալի մտաւոր ներուժին էին գումարւում զարմանալի աշխատասիրութիւնը, հաւատքի ուժը, սէրն առ հայութիւն ու մարդկութիւն, Նրա սրբակենցաղ ապրելակերպն ու անկրկնելի բարութիւնը: Եւ այս բոլոր յատկանիշների ծաղկեփունջն էր պայմանաւորում նրա արտասովոր անհատականութիւնը:*

*Վեհափառի սիրուած բնաբանն էր «մարդ է որ գործէ զերկիր», ինչը գրուած է նաեւ նրա շիրմաքարին. Աստուած ստեղծել է մարդուն, Նրան է վստահել երկիրը, որպէսզի նա այնտեղ գործունէութիւն ծաւալի: Սակայն միայն Իր մտադրութեան շրջանակներում՝ Քրիստոսի մատնանշած ուղիով ընթանալը մեզ կարող է իրապէս երջանկացնել…, հասցնել՝ Աստծու Թագաւորութիւն: Ակներեւ է հայութեան ներգրաւուածութիւնը մարդկութեան երջանկութեան բանալի քրիստոնէութեան տարածման գործում. առաջին քրիստոնեայ պետութիւն, համաշխարհային մայրաքաղաք Երուսաղէմում մնայուն ներկայութիւն, Կիլիկիայի հայկական թագաւորութիւն, Բիւզանդիայի գահակալութեանը հարիւրամեակների մասնակցութիւն…: Աստուած հէնց աբրահամական այս կրօնի տարածման ու պահպանման առաքելութեան նպատակով է ընտրել մեր ազգը եւ վեհափառը յորդորում էր այդ առաքելութիւնը շարունակել. «Եկեղեցին առաքելական է կոչւում ոչ միայն Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների կատարած գործերի շնորհիւ. մեր մէջ պէտք է ապրի առաքեալների ոգին եւ մենք այն պէտք է այսօր դրսեւորենք», սովորեցնում էր նա: Բայց քրիստոնէութիւնն ուղղակի*

*Շար.ը էջ 18*

# ԴՈՒՐԵԱՆԻ ԳԱՆԿԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍԿԻՒՏԱՐԷՆ ԵՐԵՒԱՆ

Որպէս հաւաքականութիւն մեծ մեռելներուն հետ հարցեր կ՛ունենանք յաճախ: Գրողներու, ազգային-հասարակական դէմքերու դիակները շատ անգամ վէճերու առարկայ են: Խնդիրը չի սահմանափակուիր հանգուցեալները Հայաստան տեղափոխելու, այնտեղ վերաթաղելու նիւթով միայն, քանի որ Հայաստանի մէջ ալ երբեմն ենթական թաղելը հարցման նշաններ կը յառաջացնէ: Թաղե՞լ: Ջմուսե՞լ: Սիրտը պահե՛լ: Մարմինը հրկիզե՞լ: Եւ նման հարցումներ... Այլազան օրինակներով գրութիւնը ծանրաբեռնելու փոխարէն, անդրադառնամ Պետրոս Դուրեանի գանկին վերաբերող նիւթին, որ ուղղակիօրէն կ՛առընչուի նաեւ մեր համայնքին:



Թերթին մէջ վերջերս հետաքրքրական լրատուութիւն մը հրապարակուեցաւ, որ արտատպուած էր «Հետք»էն: Թաղե՞լ Պետրոս Դուրեանի գանկը, որ տարիներ առաջ տարուած է Հայաստան եւ ի պահ դրուած Գրականութեան թանգարանին մէջ, թէ՝ որպէս ցուցանմոյշ, պատմական թանկագին աւանդ շարունակել պահել:

Նոյն լրատուութենէն կը հասկնանք, թէ այս նիւթը հարց մըն է Հայաստանի անկախացումէն մինչեւ այսօր: Մշակոյթի նախարարներ, Երեւանի քաղաքապետներ, թանգարանի տնօրէններ փոխուած են, սակայն հարցը չէ փոխուած, մնացած է անլուծելի: Պատասխանէն դուրս կը հանուին ոսկորները ու կ՛ամփոփուին մաքուր տոպրակի մը մէջ, կրկին խնամքով թաղուելու համար:

Ոսկեան այս աշխատանքի ժամանակ բանուորի մը ձեռքին կը նկատէ գանկը, զոր կ՛առնէ ու ցոյց տալով ժամանակուան պատրիարքին՝ Գարեգին արք. Խաչատուրեանին (որ ներկայ է ու կը հետեւի սիրելի ուսուցչին՝ Եղիշէ արք. Դուրեանի եղբօր, տիրամօր ու իր տիրամօր մասունքներու տեղափոխման աշխատանքին), կ՛առաջարկէ «այս գանկը փոխանակ փոսին մէջ լքեալ փոշիացնելու» յաւերժացնել՝ նուիրելով Ս. Խաչ Դպրեվանքի գրադարանին, որպէսզի նոր սերունդը ունենայ «շօշափելի փառասիրական պարծանքը իր հոգեկան աշխարհին մէջ»:



Վազգէն Ա. Կաթողիկոս եւ Պատրիարք Շնորհք արք. Գալուստեան

նատու մըն ալ յայտնած է, թէ նիւթը ամենեւին թաղելը կամ չթաղելը չէ, այլ՝ յուղարկաւորութեան արարողութեան կազմակերպումը: Կազմակերպե՞լ, թէ ոչ:

Վերջերս «Ժողովուրդ»ին մէջ դէպք մը պատահեցաւ յօդուած մը, որ կը վերաբերէր Պետրոս Դուրեանի գանկի ողիսականին: Հեղինակն է Ստեփան Ոսկեան, որ պոլսահայ համայնքին մօտաւոր անցեալի անմոռանալի անուններէն մէկը եղած է, որպէս հասարակական դէմք: Զինքը մանաւանդ դեռ կը յիշեն գաղութիս Գատըգիւղաբնակ հատուածը ու անպայման պէտք է յիշեն դպրեվանքցիները, որոնց խնամակալութեան հիմնադիր անդամն ու կրթօճախին շինարարը եղած է:

Ոսկեան կը պատմէ, թէ 1959-ին, Պալըգլըի գերեզմանատան ապասեփականացման շրջանին, երբ առջեւի շարքի շիրիմները կը տեղափոխուէին աւելի խորերը, Պետրոս Դուրեանի առաջին կարգին վրայ գտնուող գերեզմա-

«Պսա՞կ ընդունելի գտայ խոհուն բաղձանքդ...», կը պատասխանէ ալեհեր պատրիարքը ու իր մօտ կանգնած բարապան Կարպիսին կը պատուիրէ գանկը թանկագին մասունքի մը նման պահել մեծ զգուշաւորութեամբ: Գանկը կը դրուի տուփի մը մէջ եւ սակայն, փոխանակ Ս. Խաչ Դպրեվանքի, կը տարուի պատրիարքարան:

Դուրեանի գանկը երկար ժամանակ մոռացութեան կը մատնուի: 1961-ին կը վախճանի Գարեգին արք. Խաչատուրեան պատրիարքը, նոյն թուականին կը գահակալէ Շնորհք արք. Գալուստեանը: Գանկը այդպէս ալ կորստեան մատնուէր թերեւս, եթէ օր մը Թեհրանէն Պոլիս չժամանէր լուսանկարիչ, լրագրող Վարդգէս Տէր-Յարութիւնեան, որ յօդուածաշարք մը կը պատրաստէր վաղամեռիկ բանաստեղծներու մասին: Ստեփան Ոսկեան հիւրին կը պատմէ Պետրոս Դուրեանի գանկին պատմութիւնը:

Անոնք անմիջապէս կը փութան պատրիարքարան, կը ներկայանան պատրիարքին, որու արտօնութիւնը կը խնդրեն գանկի լուսանկարման համար: Այդ պահուն ալ յայտնի կը դառնայ որ պատրիարքը անտեղեակ է նման մասունքի մը գոյութենէն իսկ: Նիւթին իրազեկ դառնալէ վերջ, կ՛արտօնէ լուսանկարել ու կը խոստանայ կարիքն ու պատշաճը խորհիլ յառաջիկային:

Աւանդապահ բարապանը՝ Կարպիս, բարեբախտաբար զգուշութեամբ ու պատասխանատուութեամբ պահած էր իրեն յանձնուած թանկագին մասունքը, զոր կը բերէ ու կը դնէ լուսանկարիչին հետաքրքիր աչքերուն ու մեքենային առջեւ: Լուսանկարումէն յետոյ գանկը կրկին խնամքով եւ անվտանգ կը զետեղեն տուփին մէջ:

Եւ օր մըն ալ, ըստ թերթին մէջ տպագրուած լրատուութեան 1969-ին, Շնորհք արք. Գալուստեան Պետրոս Դուրեանի գանկը Պոլիսէն ծածկաբար կը տեղափոխէ Հայաստան, կը յանձնէ Վազգէն Ա Կաթողիկոսին: Վերջինս ալ զայն կը փոխանցէ Գրականութեան թանգարանին, ուր կը մնայ այսօր ալ: Նշեմ, թէ այս գանկոսկրով ակադեմիկոս, գանկաբան Անդրանիկ Ճաղարեան պիտի վերականգնէր Պետրոս Դուրեանի դէմքը, պիտի շինէր քանդակը:

Սկիւտարի գերեզմանատունէն դէպի Երեւանի Արամի փողոցին վրայ գտնուող թանգարանը երկարող ուղին աներեւակելիօրէն երկար է գանկի մը համար, որ ԺԹ դարուն ապրած ուղեղ մը կրած է իր մէջ:

Ժամանակը չէ՞ աւարտ մը պատրաստելու Պետրոս Դուրեանի գանկի ողիսականին համար: Մանաւանդ պէտք է յիշել որ յաջորդ տարի պիտի լրանայ վաղամեռիկ քերթողին 160-ամեակը:

Սեւան Տէյիրմէնճեան
«Ժամանակ», Պոլիս

# ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՂԹԱՄԱՐԻ ՄԷՋ

Պոլսոյ «Մարմարա» թերթէն կ՛իմանանք թէ այս տարի Սեպտեմբերին հանդիսաւոր սուրբ պատարագ պիտի մատուցուի Վանի Աղթամար կղզիի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ: Այս առիթով Թուրքիոյ Հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ Բարձ. Տ. Արամ Արք. Աթէշեան ու Հայր Թաթուլ Ծ. Վրդ. Վան երթալով տեղւոյն կուսակալին հետ խորհրդակցական հանդիպում մը ունեցած են, Խաչվերացի տօնին զուգադիպող ուխտագնացութեան եւ պատարագի պատրաստութիւններու կապակցութեամբ: Ուխտագնացութեան նախապատրաստական աշխատանքներու շուրջ խօսակցութեանց ընթաքին՝ կուսակալ Մունէր Գարալօղլուի հետ նկատի առնուեցան կազմակերպչական մանրամասնութիւններ:

Հանդիպման աւարտին Սրբազան Հայրն ու Հայր Թաթուլը ուղղուեցան դէպի Աղթամար կղզի եւ տեղւոյն վրայ կատարեցին քննարկումներ: Այնուհետեւ հանդիպում մը ունեցան Կէվաշի գաւառապետ Եուսուֆ Կիւնիի հետ:

# ՏԻԱՐՊԷՔԻՐԻ ՄԷՋ ՀԱԶԱՐԱՒՈՐՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱՒ ԵՐԳԻՉ ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 2-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Անցնող շաբթուան ընթացքին Տիարպէքիրի մէջ հազարաւոր քաղաքացիներու մասնակցութեամբ նշուած է հայազգի երգիչ Արամ Տիգրանի մահուան 2րդ տարելիցը: Արդարեւ, Տիարպէքիրի քաղաքապետարանի Արամ Տիգրանի անուան կոնսերվաթորիայի եւ Տիգրիս-Եփրատ մշակութային միութեան կազմակերպած յուշ-երեկոյին՝ իրենց մասնակցութիւնը բերած են քրտական «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» կուսակցութեան ղեկավարները, քաղաքային իշխանութեան ներկայացուցիչներ, արուեստագէտներ եւ այլ անձնաւորութիւններ:



Նշենք նաեւ որ 1934ի Յունուարի 15ին Սուրիոյ Քամիշլի քաղաքին մէջ ծնած Արամ Տիգրանը 20 տարեկանին նուիրուած է երաժշտութեան երգելով հայերէն, քրտերէն, թրքերէն, արաբերէն, յունարէն եւ ասորերէն: Արամ Տիգրանը հայկական ժողովրդական երգերու շարք մը թարգմանած է քրտերէնի եւ հակառակը:

Յայտնի հայազգի երգիչը թաղուած է Պրիւքշէլի մէջ: Քիւրտ կուսակցապետը վերջերս խոստացած է կատարել Արամ Տիգրանի ցանկութիւնը:



## ԱՒԵՏԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՆՄԱՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ*

Սիրելի Սեդա, Անի, Ներսէս, Ալին եւ ընտանիք

Խորապէս ցաւակցելով ձեր հօր շիջումին համար, պիտի սակայն ընա՛ւ չըսեմ թէ «ոչ եւս է Աւետիս Մանուկեան», որովհետեւ անկից եւ ձեր հանգուցեալ մօրմէն՝ Տիկին Աստղիկէն, անպայման որ ձեզի ժառանգ տրուած է շող մը, ճառագայթ մը իրենց էութենէն եւ շնորհներէն, զորս դուք արդէն այլակերպօրէն ուռճացուցած էք եւ դեռ պիտի շարունակէք հարստացնել Գեղեցիկին ու Բարիին մշակումը, ծառայելով ստեղծագործ արհեստի եւ մանաւանդ արուեստներու ձեր իրագործումներով: Ի զուր չէ ըսուած, թէ ծառը իր պտուղէն կը ճանչցուի: Ձեր կազմաւորուած գոյութիւնն իսկ ապացոյցն են այս ճշմարտութեան. հմուտ եւ ստեղծագործ արհեստը, մետաղեայ քանդակագործութիւնը, նկարչութեան եւ լուսանկարչութեան տիրապետուած ձեր նուաճումները, անպայման որ ծլան եւ զարգացան շնորհիւ ձեր ծնողներուն գիտակից քաջալերանքին եւ անոնց ներհուն շնորհներուն ժառանգութեան:

Աւետիս Մանուկեանի մօտ, բազմատեսակ էին այդ շնորհներն ու արժանիքները: Նախ, բառին իսկական իմաստով, գլխագիր Մարդն էր ան, ազնիւ, վեհանձն, ուղղամիտ, սկզբունքային եւ իտէալապաշտ: Իր ազգային ծառայութեան ոգին շատ կանուխէն ի սպաս դրաւ ան, մեր ՀԵԸ-ի երիտասարդական շարժումին կազմակերպման եւ առաջնորդութեան գործունէութեամբ: Երկար տարիներ ճիգ ու նիւթական, ինչպէս նաեւ ընտանեկան բարօրութենէն խլուած ժամանակ տրամադրելով ազգային բազմաձեւ ծառայութիւններու: Տալը իր մօտ առաքինութեանց հիմնաքարն էր, առանց երախտագիտութեան ակնկալութեան: Համեստ էր իրա՛պէս, բայց նաեւ գիտակից՝ իր արժանիքներուն: Անուղղելի լաւատես՝ կը հաւատար մարդկային արժէքներուն եւ մանաւանդ ունէր գեղապաշտ ոգի մը եւ գեղեցիկի տեսլական, որոնցմով ջանաց օծել կեանքի բոլոր երեւոյթները անխտիր: Երեւակայեցէք՝ ութսուն տարեկանին, անոր մօտ, վարակուելով Սեդային նկարչական իրագործումներէն, ուռճացաւ նկարչութեան նոր սէրն ու փափաքը, ի յայտ բերելով իր ցարդ թաքուն մնացած նկարչական ներհուն ձիրքը: Ինչ փոյթ թէ իր նկարները նախնական փրիմիթիվ դպրոցին դասակարգումը յիշեցուցին, երբ անոնք յոյզ եւ ապրում դրսեւորեցին իրենց պարզունակ գեղեցկութեամբ: Ան տուաւ երեք ցուցադրութիւններ՝ ամբողջութեամբ հասոյթը յատկացնելով ազգային կրթական հաստատութիւններուն: Ժամանակ մը, նոյն իսկ փորձեց մասնակցիլ մեր գրական շարժումին, «Շիրակ» ամսագրին կարգ մը թարգմանութիւններ տալով: Բայց չափի գիտակցութիւնը կ'երեւի արգելք հանդիսացաւ շարունակելու այդ մարզէն ներս: Սակայն ինք, իր ազնուական տիկնոջ հետ մնաց յամառ ընթերցող մը՝ մեր մամուլին եւ գիրք ու բանին, միշտ ցուցաբերելով առողջ մտածողութիւն եւ դատում:

Տակաւին՝ ան վարպետ, ձեռներէց եւ ստեղծագործող արհեստաւոր մը եղաւ, արծաթագործութեան մեծ զարկ տալով եւ գեղապաշտ իր ճաշակով եւ բծախնդրութեամբ արհեստը արուեստի վերածելով:

Վերջապէս հաճելի, փնտռուած ներկայութիւն էր, միշտ շէն ու ընկերասէր, հիւրասէր եւ զուարթախոհ՝ կեանքի յարգն ու արժեւորումը լաւապէս իւրացուցած: Բնութեան հանդէպ իր սէրը կը դրսեւորէր իր գողտրիկ բնակարանը առինքնող պարտէզի մը վերածելով, աճեցնելով ծաղիկներու, պտուղներու եւ բանջարեղէնի ընտրանի մը, վայելելու համար զանոնք բարեկամներով: Երկար ատեն պիտի չմոռնանք իր տարեկան խաղողի տոհմիկ կերոյթ-հաւաքոյթները:

Այս բոլորը՝ ըսելու համար թէ Աւետիս Մանուկեան ապրեցաւ կեանքը լիաբուռն, արժանապատւո՛ւթեամբ, իմաստաւորելով իրեն շնորհուած 96 տարիները, ազգային ու մարդկային ծառայասիրութեամբ, գեղեցկացնելով իր օրերն ու շրջապատը, ազնուանալով եւ ազնուացնելով: Ան մեկնեցաւ անտրտունջ, հոգին պայծառ եւ իրեն տրուածին բազմապատիկ հատուցած ըլլալու անվրդով գոհունակութեամբ:

Իր յիշատակը թող միշտ վառ մնայ:

## ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

*Շարունակուած էջ 5-էն*

հետ զրոյցի ընթացքին, Ընկ. Գալփաքեան խօսեցաւ Հայաստանի եւ Լիբանանի հրատապ զարգացումներուն մասին, ինչպէս նաեւ անդրադարձաւ գլխաւոր թեմաներու շուրջ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան դիրքորոշումներուն, այս ծիրէն ներս փոխանցելով ընդարձակ տեղեկութիւններ:

Ընկ. Սեպուհ Գալփաքեան, Սիտնի իր այցելութեան ընթացքին նաեւ զանազան հանդիպումներ ունեցաւ Հնչակեան Կուսակցութեան շրջանի պատասխանատուներու եւ կուսակցական ընկերներու, ինչպէս նաեւ Սիտնիի Հայ համայնքի տարբեր շերտերը ներկայացնող հայրենակիցներու հետ, ծանօթանալու անոնց խնդիրներուն, խորհրդակցելու հաւանական լուծումներու մասին, գնահատելու անոնց ազգանուէր գործունէութիւնը, միշտ շեշտը դնելով հայապահպանման կարեւորութեան վրայ:

## ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

*Շարունակուած էջ 7-էն*

տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն եւ լազաւոյն նուէրը շահեցաւ Սարգիս Սահակեան: Ադամանդակուռ ոսկեայ վիզի զարդեղէնը նուիրուած էր ոսկերիչ Ալպէրթ Զուխատարեանի կողմէ:

Հոս տեղին է յիշել որ Փասատինայի Համագաղութային Մարմինը անխոնջ կերպով կ'աշխատի նաեւ որ Փասատինայի Յաղթանակի Զբօսայգիին մէջ կառուցուի Մեծ Եղեռնի Յուշակոթող մը՝ որուն համար արուեստագէտներէ խնդրուած էր ներկայացնել իրենց յատակագիծերը եւ կամ մանրատիպարները:

Ուրախ ենք յայտարարելու որ վեց արուեստագէտներ ներկայացուցած էին իրենց առաջարկները եւ ժողովուրդը բացառիկ առիթը ունեցաւ առաջին անգամ ըլլալով մօտէն ծանօթանալու անոնց եւ իրենց կարծիքը յայտնելու այդ ուղղութեամբ:

Պէտք է աւելցնել նաեւ որ արուեստագէտներու մանրատիպարներու կողքին զետեղուած էին խնդրագրեր՝ որպէսզի հանդիսատեսները առիթը ունենային ստորագրելու զանոնք: Ասոնք պիտի ներկայացուին քաղաքի պատասխանատու մարմիններուն՝ առ ի գիտութիւն որ հայ գաղութը ամբողջովին նեցուկ կը կանգնի յուշակոթողի մը զետեղման: Հետաքրքրական է գիտնալ որ խնդրագիրները ստորագրեցին նաեւ քաղաքապետն ու ոստիկանապետը, նաեւ օտար երեւելիներ:



## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ԳԱՆԴՈՒ ՃԱԽԱՐԱԿԸ

*Շարունակուածէջ6-էն*

*ղութեամբ: Հարցերի լուծումները գործողութիւնների եղանակ են պահանջում: Յեղափոխութիւ՞ն, թէ՞ «Գանդու ճախարակը»: Հասկանալի է, ընտրութիւնը Հայաստանի հանրապետութիւնում ապրող ժողովրդինն է, արտաքին ցանկացած միջամտութիւն անթոյլատրելի է: Համերաշխութիւնը այլ հասկացողութիւն է...*

*Գանդու ճախարակը Հայաստանի քաղաքական կեանքում ակտուալ դարձաւ այն ժամանակ , երբ Հայաստանի քաղաքական գործիչները չունենալով յստակ աշխատանքային, գաղափարական պլատֆորմ, քաղաքատնտեսութեան տեսական գիտելիքներ, անգործութեան մատնուեցին: Ինչպէս իրերը ցոյց տուեցին, հակասոցիալիզմն ու անթիսովետիզմը բաւարար չեղաւ նոր պետականութիւն կառուցելու համար: Յիշեցին Գանդու ճախարակը եւ մեր ժողովրդական մանիր, մանիր իմ ճախարակ երգը, որը հանգաւորւում է «պայքար, պայքար մինչեւ վերջ» անկապ կոչի հետ: Հասկանալի է, խօսքը առաջին նախագահ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի ՀՀՇ-ական ռամկավար-ազատական, ազատ շուկայական ու լիբերալ տնտեսական դոկտրինայի մասին է: Տեսական այս հիմունքները օգտագործելով ներկայ իշխանութիւնները, «թաթար մոնկոլական, թալանչիական ու օլիգարխիկ» իրենց պրակտիկայի մէջ, Հայաստանի տնտեսութիւնն ու Հայաստանի ժողովրդին այնտեղ հասցրին , որին այսօր ականատեսն ենք բոլորս...*

*Լեւոն Տէր- Պետրոսեանը ՀԱԿ-ի գլուխն անցած, հմտօրէն զանգուածներին «ընդդիմութեան» քարոզչութեան դիրքերից շարունակում է գերդուած պահել: Առաջին նախագահը, տարիներ յետոյ իշխանութիւններին վախեցնում է՝ եթէ «այսպէս, այնպէս չանէք», Ջրբաժան կը լինի: Արդեօք այս չի՞ նշանակում, որ ՀԱԿ-ի ու «թաթար մոնկոլական» իշխանութիւնների ջուրը տարիներ շարունակ, մինչեւ հիմա համերաշխ ու փոխհասկացողութեամբ մէկ առուով է հոսել...*

*Գործող նախագահ Սերժ Սարգսեանի քաղաքական ապարատը «Հայաստանի Հանրապետութիւն կուսակցութիւնն» (ՀՀԿ)- ն է, որը նոյնպէս չունի յստակ տնտեսական պլատֆորմ, իսկ գաղափարախօսութիւնը խարխխուած է Գարեգին Նժդեհի «ցեղակրօն», չինծու, այլ խօսքով ռասիստական ու նէօ-նացիստական տեսութեան վրայ: (ՀՀԿ) կուսակցութեան շուրջ համախմբուած են բոլոր կարգի մեծ ու փոքր կալիբրի օլիգարխները: Այս լուսաւոր ժամանակներում այսպիսի խառնաշփոթ կառոյց ունեցող կուսակցութիւնը երկիրը հեռու տանել չի կարող, թէկուզ օրնիբուն գոռալ՝ «առաջ Հայաստան»...Արդէն իսկ առաջ գնալու տեղ չկայ, երկիրն անդունդի եզրին է:..*

*Մեծ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի խօսքերը իրողութիւն են նաեւ մեր օրերում.*

«Հարուստ մարդիկ ուտեն-խմեն
Աշխարհի ծոխ սեղանից,
Աշխարհի խորթ տղերքն եմ,
Փայչկայ աշխարհից»:

*Այս ուտող-խմող տղաներից մեկը, առաջին ու երրորդ նախագահներին իրար կապող օղակ երկրորդ նախագահն է, որին աշխարհահռչակ խմբավար Օհան Դուրեանը այսպէս բնութագրեց 2008թ. Մարտի 1-ին.- «Ռոբերտ Քոչարեանի Հայաստան գտնուելու հանգամանքն արդէն իսկ արտակարգ դրութիւն է, նոր արտակարգ դրութիւն յայտարարելու անհրաժեշտութիւն չկայ»: Այսօր բոլորի համար լաւ կը լինի, եթէ Ռոբերտ Քոչարեանը քոչի Հայաստանից ու ժողովրդից թալանածի հետ գնա Թանզանիայի անտառներ, գուցէ այնտեղ գտնի հոգու հաւասարակշռութիւն...*

*Ստորեւ բերված վիտիօ քլիփները, որոնք անկախ Հայաստանի ծանօթ վիճակի նմուշներ են, խօսում են երկրի խորթ երեխաների մասին , որոնք «փայ չունեն» այս Հայրենիքից:*

http://www.youtube.com/watch?v=bP47yy4eDfI&feature=player_embedded

*Երկրի անվտանգութեանը սպառնող չափերի հասած արտագաղթը, գործազրկութիւնը, արտաքին պարտքերի շարունակական աճը, թանկութիւնը եւ ամենասարսափելին ժողովրդի հաւատի կորուստը ապագայի նկատմամբ, պարզորոշ հաստատում են, որ Հայաստանում տնտեսական ու քաղաքական յեղափոխութեան վիճակը անխուսափելի է դառնում: Գարունը չեն պատուիրում, այլ գարունը գալիս է, թէկուզ ուշացումով...*

*Յեղափոխութիւնը հասարակական տնտեսական ծայրահեղ ծանր վիճակի լուծման միջոց է, յեղափոխութիւնները կատարւում են ոչ լաւ օրից... Պատմութիւնը ցոյց է տուել, որ ժողովրդական զանգուածները իրենց կեանքի պայմանները բարելաւելու եւ քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու համար, յեղափոխութեան են գնում, երբ բոլոր այլ միջոցները սպառուած են լինում:*

*Յեղափոխութեան երգիչ, մեծ բանաստեղծ Եղիշէ Չարենցը այսպէս է նկարագրում յեղափոխութեան ելած ամբոխներին.*

Արեւի տակ իրիկնային, իրիկնային հրով վառուած՝
Այդ հին դաշտում կուտում էին ամբոխները խելագարուած:
Քաղաքներից ու գիւղերից, ստեպներից հեռու ու մօտ՝
Եկել էին նրանք նորից՝ լուսավառուած ու կրակոտ:
Ով քաղաքից էր հեռացել - նա թողել էր մշուշը ծեր,-
Մշուշը, որ կեանքի վրայ մխաշաղախ ամպ էր դարձել:
Ով եկել էր գիւղից հեռու - նա թողել էր հողը խոնաւ,
Որի վրայ կեանքը հլու ոչ մի ոսկի հասկ չծնաւ:
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր
Լայնութիւնը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել:
Ով քաղաքից էր հեռաւոր, ուր մառախուղ էր անորոշ՝
Նա բերել էր բոցախտաւոր սիրտը, որպէս կարմիր դրօշ:
Ով եկել էր թողած հեռուն անծայրածիր մութը գիւղի՝
Բերել էր իր մկաններում բեղմնաւորուած ուժը հողի:
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպէս գերի-
Բերել էր իր լուրթ աչքերում լայնութիւնը ստեպների...
Ըմբոստացած, խելագարուած, չտանելով հին կեանքը էլ՝
Անծիր դաշտում այդ հաւաքուած՝ նրանք կռուի էին ելել:

***Բոլորս** էլ գիտակցում ենք, որ Հայաստանում պրոբլեմների յեղափոխական ելքով լուծումը լաւագոյն միջոցը չէ, սակայն Հայաստանի իշխանութիւնները, օլիգարխիկ մեծահարուստներն ու ժողովրդին անխնայ կեղեքողները, կաշառակեր բարձրաստիճան պետական պաշտօնեաները, անարդար դատարանները, օրէնսդիր ու գործադիր անօրէնները այլընտրանքի տեղ չեն թողնում ժողովրդի համար:*

*Հայաստանի վերնախաւը նոյնպէս գիտակցում է, որ յեղափոխութիւնից ծանր վնասներ են կրելու եւ շատ բան են կորցնելու, որ հակափամփուշտային ջիփերը, համերները, սափրագլուխ դիպուկահար թիկնապահների բանակն էլ չի կարող պաշտպանել իրենց: Սակայն շահի ու ժողովրդին հարստահարելու անհագ մարմաջը մղում է նրանց երկիրը պահելու սոցիալապէս այս պայթունավտանգ վիճակում... Սփիւռքը անզօր է լուրջ միջամտութիւններ կատարելու, սակայն մեծապէս մտահոգ է մեր երկրի, մեր հայրենիքի ու ժողովրդի ճակատագրով: Մենք օտար երկրների շահամոլական «բարեկամութեանը» չենք հաւատում: Թուրքն ու պանթուրքիզմը յոթը սարի ետեւում չէ, այլ Արարատի փէշերին է ու Արցախի սահմաններում:*

*Քաջ յայտն է, որ ԼՂՀ-ի անվտանգութիւնը ուղիղ կախուած է Հայաստանում տիրող քաղաքական կայունութեան աստիճանից: Հայաստանի ու Արցախի իշխանութիւններն ու նրանց հետ սերտաճած մոնոպոլ- կապիտալիստները երկրի բնակչութեան սոցիալական վիճակը չբարելաւելով, բարձրացնում են յեղափոխական ու զէնքի դիմելու միջոցներով հարցերի լուծման հաւանականութիւնը, որի ծանր հետեւանքների համար պատասխանատու են: Այն, ինչին վկայ ենք այսօր արաբական աշխարհում, խօսուն արտայայտութիւններն են վերը նշուածների...*

*Անհիմն են բոլոր այն պնդումները, թէ Հայաստանը աղքատ երկիր է եւ միջոցներ չունի: Եթէ երկրում պալատներ ու սեփական եկեղեցիներ կառուցելու ու երկրից դուրս պալատներ գնելու համար միջոցներ կան, ապա երեխաներին սնելու ու ցեխաջրերից հանելու հնարաւորութիւն անպայման կայ: Հայաստանի ու Արցախի հարստութեան արդարացի բաժանման դէպքում, ժողովուրդը կարող է ապահով ու լաւ կենսամակարդակ ունենալ:*

*Ոչ արտահերթ եւ ոչ էլ հերթական ընտրութիւնները եւ ոչ էլ նախագահների փոփոխումը, երկրի անմխիթար վիճակին փոփոխութիւն չեն բերելու: Համակարգային փոփոխութիւններ են պահանջւում:*

*Նրանք, ովքեր այսօր չեն հարգում հայ մարդու, իրաւունքներն իր երկրում, վաղը ստիպուած կը լինեն երկիրն ու իրենց հարստութիւնները պաշտպանելու համար Գինեբիսաոյից, Քոնգո-Քինշասայից ու Բանգլադեշից վարձկաններ բերել: Այս բոլորը տխուր են հնչում, սակայն սպասելի են...*

*Ժողովրդական զանգուածները իրաւունք ունեն բոլոր հնարաւոր միջոցներով պաշտպանելու իրենց քաղաքացիական իրաւունքները՝ ընդհուպ մինչեւ յեղափոխութիւն:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.
Name: ----------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :------------------------ Fax : -------------------------

## ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ ԱՌԱՋ

*Շարունակուած էջ 1-էն*

նե անոր նուիրումը հանդէպ մեր ոսկեղնիկ լեզուին: Անմնացորդ սէրը՝ հանդէպ Մեսրոպատառ գիր ու գրականութեան: Գուրգուրանքը՝ հանդէպ հայ մշակոյթին: Վերջապէս, խորունկ սէրը՝ հանդէպ ազգին ու հայրենիքին:

Տարակոյս չկայ, որ նոր ժամանակներու զուգահեռ, յառաջ քշուին նոր մտածելակերպեր: Մեր հաւաքական կեանքէն ներս տեսնուին օտարամուտ կենցաղային սովորութիւններ: Տարբերայնօրէն յառաջ քշուին սկզբունքային նորանոր խմորումներ: Դատողութիւններ: Առաջադրուին նորարարական բնոյթի մարտահրաւէրներ: Անշուշտ՝ այդ բոլորը կը կատարուին փորձառական դաշտի վրայ, որպէս փորձառական փուչիկ: Այդ բոլորը, որոնք մերթ մերթ արտայայտութիւն կը գտնեն քիչ մը ամէն մակարդակի վրայ հայրենական եւ տարաշխարհի մեր ազգային իրականութենէն ներս գործող, ինչո՞ւ չէ, նաե՛ւ պատասխանատու դիրքերու վրայ գտնուող անձնաւորութիւններու կողմէ՝ քօղարկեալ ժխտումն է դարեր ամբողջ հայապահպանման անհաւասար սատար՝ մեր ազգային սրբազան առաքելութիւններուն:

## «ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅՄԶ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ԴԱՍԷ «ՈՒՐՈՒԱԿԱՆ-ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ» ՇԱՐՔԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

զբաղին ծմրանիւթերու կամ այլ ապօրինի գործունէութեամբ: Անոնք ի յայտ կու գան պատերազմի իբրեւ արդիւնք եւ կը գոյատեւեն հակամարտութեան շարունակման վտանգի հաշուին: Անոնք կը ստեղծեն պատերազմներ, կը նպաստեն յանցագործութեան տարածման ու կը տկարացնեն արդէն իսկ թոյլ պետութիւնները»:

Յօդուածի հեղինակները կ՛առաջարկեն օգնել օրինակարգութիւն ձեռք բերելու նմանատիպ այն միաւորներուն, որոնց կառավարութիւնները «իրենց լաւ կը դրսեւորեն»: Իբրեւ օրինակ կը մատնանշուի Թայուանը, որուն անկախութեան դէմ կ՛արտայայտուի Չինաստանը:

Երբ ԱՄՆ եւ այլ պետութիւններ, պնդելով տարածքային ամբողջականութեան սկզբունքին վրայ, կը բացառեն «ուրուական-պետութիւններու»՝ համաշխարհային քաղաքականութեան մէջ պատասխանատու դառնալու հնարաւորութիւնը եւ կը պիտակաւորեն՝ իբրեւ անջատողականութեան եւ մաքսանենգութեան յենարաններ, միջազգային հանրութիւնը կը զրկուի անոնց առաջնորդները պատասխանատուութեան կանչելու միջոց-ներէն:

Ասոր զուգահեռ՝ յօդուածի հեղինակները կը նշեն, որ ճիշդ չէ կեդրոնանալ միայն այդ միաւորներու՝ պետութիւն դառնալու ձգտումին վրայ. Երբ նոյնիսկ «ուրուականը» դառնայ իրական պետութիւն, խնդիրները կրնան պահպանուիլ: Կարմրաբոյսի օրինակէն խուսափելու համար, միջազգային հանրութիւնը պէտք է քաջալերէ բարեփոխումները:

«Հակառակ պարագային Երկրի միլիոնաւոր բնակիչներ պիտի շարունակեն մնալ քաղաքական ու իրաւական անորոշութեան մէջ, իսկ անոնց հարեւանները պիտի ըլլան պատերազմի մշտական վտանգին տակ»,- կ՛եզրակացնէ «Նիւ Եորք Թայմզ»:


# ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave**
**Pasadena, CA 91107**
**Գրասենեակները վերանորոգուած**
**եւ յարմար վարձքերով**
**Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝**
**(626) 398-0506**



**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP #7555)**
**2011 CONTINUUM OF CARE HOMELESS ASSISTANCE PROGRAMS**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified organizations interested in providing supportive services with assisted housing through the Section 8 Continuum of Care Homeless Assistance Programs. Copy of the RFP may be obtained beginning August 1, 2011 via http:// www.hacla.org/ps/ or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M. August 26, 2011.**

8/11, 8/18/11
CNS-2147365#
MASSIS WEEKLY



**INVITATION FOR BIDS**
**(IFB) No. 1711**
**THE RE-ROOFING OF SIXTY (60) BUILDINGS AT RANCHO SAN PEDRO HOUSING DEVELOPMENT LOCATED AT 275 W. 1ST STREET, SAN PEDRO, CA 90731**

**The Housting Authority of the City of Los Angeles invites vendors to submit firm fixed price bids for the re-roofing of sixty (60) buildings for Rancho San Pedro housing development located at 275 W. 1st Street, San Pedro, CA 90731. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m. (local time), August 24, 2011.**

8/11, 8/18/11
CNS-2147045#
MASSIS WEEKLY


## ԳԱՐԵԳԻՆ Ա. ԵՐԱՆԱԼՈՅՍ ՎԵՀԱՓԱՌ

*Շարունակուած էջ 14-էն*

կենսական է յատկապէս մեր ժողովրդի համար, ում ազգային դիմագիծը ձեւաւորել է հէնց նա, ու հայ-քրիստոնեայ ազգութեան երկրորդ, բայց առաջնային նշանակութեան մասնիկի կորստեամբ մեր ժողովուրդը պարզապէս կը վերածուի դիմազուրկ մի զանգուածի: Եւ հէնց սա է շարունակաբար տեղի ունենում մեզանում: Վեհափառը մեզ բացայայտեց մեր ազգի մի եզակի, կարեւորագոյն առանձնայատկութիւն, որ առանց քրիստոնէական արժեհամակարգի տկարանալով այն պարզապէս կ՛անհետանայ եւ ընդհակառակը՝ կը զօրանայ՝ որքան աւելի մօտ լինի նրան: Արտասանելով «Փրկեա՛յ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյց» աղօթքը անտեսանելի ներքին թշնամու որոգայթներից նա մեզ զգուշացնում էր. «Տեսանելի թշնամին աչքով կը տեսնես, ինքզինքդ կը պաշտպանես եւ կրնաս խուսափիլ այն չարիքէն, որ դուրսի թշնամին կրնայ պատճառել: Ես տեսանելի թշնամիներէն շատ չեմ վախնար...: Ի՞նչ է աներեւոյթ թշնամին, եւ շատ խորունկ խօսք է: Այն թշնամին, որ մեր մէջէն կը գործէ, այն թշնամին, որ մեզ մեր քրիստոնէական հաւատքին մէջ կը տկարացնէ՝ այդ թշնամին է, որ ամէնէն վտանգաւորն է. որովհետեւ այդ թշնամին կը նմանի ծառի մէջէն գործող որդին, որ կ՛ուտէ աւիշը, կը չորցնէ ծառը...»:

Աւագանի անուամբ Նշան Սարգիսեանի գալուստը մութ-ցուրտ տարիներից եւ պատերազմից դեռ ուշքի չեկած Հայաստան ասես Երկնային իւրատեսակ մի նշան էր, որ Աստուած մեզ հետ է: Զուգադիպութեամբ կամ թերեւս՝ ոչ, հէնց այդ ժամանակուանից կատարուեց բեկում, երկրում նշմարուեց գործ, աշխուժութիւն, առաջացաւ յոյս, եւ եղան պահեր, որ ոմանց թուաց, թէ Աստծոյ օրէնքի ու արդարութեան սերմանի առողջականը վատթարացաւ: Անքննելի են Տիրոջ գործերը, թէ ինչու Նա մեզանից այդքան վաղ հեռացրեց վեհափառին ու տարաւ Իր մօտ: Հաւանաբար գայլրացաւ, որ վեհարանի բազմամեայ ծեր աշխատակիցը, ով նաեւ երբեմն սուրճը կաթացնում էր ներողամտօրէն ժպտացող վեհափառի ծնկներին, բարի խօսքեր չէր արտաբերում Նրա հասցէին: Երեւի թէ բարկացաւ, որ «»Ջերմուկի» արտահանմամբ բարեկեցիկ ապրելու» յոյսով անկախացող բնակչութիւն-ժողովուրդը իր իսկ բարերարին չի ճանաչում, մէջքով շրջւում դէպի նա, երբեմն էլ դատապարտելիօրէն արտայայտւում: Ու որոշեց թողնել այդ բնակչութեանը իրենք-իրենցով, մինչեւ որ բացուեն նրանց աչքերը ու կարողանան տեսնել այն ճանապարհը, որը ցոյց տրուեց նրանց: ...Գուցէ նաեւ վեհափառն արդէն կատարեց Աստծոյ ծրագիրը, թողնելով իր հիմնաստեղծ ազդեցութիւնը, մեծ ներուժ պարունակող մտքերը, թէեւ յստակ շարադրուած, բայց վերծանման համար դեռեւս ժամանակ պահանջող նրա տողերը: Եւ դեռ պիտի հետեւորդները գան կառուցելու Հայոց Տունը վեհափառի գցած անխորտակ հիմքերի վրայ:

Վեհափառի այս աշխարհից հեռանալը նոյնպէս յատուկ էր միայն մարգարէներին, չարչարանքները ծանր էին, բայց նա քրիստոսական տոկունութեանբ հանդուրժեց դրանք. «Արտակարգ կամքի տէր անձնաւորութիւն մըն էր հանգուցեալ վեհափառը: Մինչ իր հիւանդութեամբ տառապողներ անտրամադիր կ՛ըլլան ու յաճախ ենթակայ՝ հոգեկան փլուզման, Գարեգին կաթողիկոս Նիւ Եորք կեցութեան օրերուն երբեք չընկրկեցաւ հոգեպէս եւ չկորսնցուց իր հոգեկան անդորրը, նոյնիսկ երբ ահռելի ցաւերու մէջ էր: Մինչ իր երկրորդ վիրաբուժական գործողութիւնը, ան ամէն օր կու գար Առաջնորդարան, ուր կը մնար ժամերով եւ ցաւը վրան՝ կ՛ունենար տեսակցութիւններ հայ եւ օտար կարեւոր դէմքերու հետ, կոնդակներ եւ նամակներ կը գրէր եւ կամ գրական աշխատանքներ կը կատարէր: Նոյնը կը շարունակէր կատարել իր բնակարանին մէջ եւս, ուր կը ջանար ամոքել իր ցաւերը՝ ապաւինելով գրչի աշխատանքին:», պատմում է սրբազան հայրը, ով այն օրերին վեհափառի կողքին էր:

Օգոստոսի 27ը Երանաշնորհ վեհափառի ծննդեան օրն է, եւս մէկ առիթ՝ հնչեցնելու երախտիքի բարի խօսքեր, վերյիշելու ու վերաարժեւորելու Նրա բարեբեր խօսքն ու գործը: Իսկ յաջորդ տարի պէտք է նշել Մեծ հայի ծննդեան ութսունամեայ տարեդարձը:

Արժանին մատուցենք մեր արժանագոյններին, որպէսզի մեր կեանքը եւս արժեւորուի եւ արձանագրուի առաջընթաց:


**INVITATION FOR BIDS**
**(IFB) 7790**
**RANGES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites your firm to submit a bid to sell ranges to the Authority.**

**Copies of the IFB may be downloaded at www.hacla.org/ncg. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100 Los Angeles, CA 90057 until 1:30 P.M., local time August 26, 2011.**

**INVITATION FOR BIDS**
**(IFB) 7792**
**REFRIGERATORS**

**The Housing Authority of the City of Los Angeles invites your firm to submit a bid to sell refrigerators to the Authority.**

**Copies of the IFB may be downloaded at www.hacla.org/ncg. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100 Los Angeles, CA 90057 until 2:30 P.M., local time August 26, 2011.**

8/11, 8/18/11
CNS-2147099#
MASSIS WEEKLY



**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680**
**F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**

**www.massisweekly.com updated every Friday**

## ՄԱՀԱԶԴ



*ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը՝ մեր մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝ ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի, որ տեղի ունեցաւ 29 Յուլիս, 2011ին իր բնակարանին մէջ:*

*Թաղման արարողութիւնը կատարուեցաւ 4 Օգոստոս, 2011ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:*

*Սգակիրներ՝*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Ալիս Գարաօղլանեան:*

*Զաւակները՝*

*Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան:*

*Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրօղլեան:*

*Թոռները՝*

*Տէր եւ Տիկ. Մայք եւ Մարալ Պօյաճեան (Լիբանան)*

*Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սիլվա Ճիլգէորգեան*

*Ժաք Գարաօղլանեան եւ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Լիզա Գիւրքճեան*

*Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրօղլեան*

*Փիթըր Քէօրօղլեան*

*Արթըր Քէօրօղլեան*

*Ռաֆֆի Քէօրօղլեան*

*Ծոռները՝*

*Քրիստ, Ռազմիկ, Ռիթա, Սազօ, Կրէյս, Տէնիըլ, Մաթիւ, Սթիվըն, Մայքըլ եւ Քրիսթինա:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան առթիւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Վարիչ Մարմնի անդամ ընկեր Վարդան Քէօրօղլեանի եւ համայն հարազատներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան առթիւ Ս.Դ.Հ.Կ. «Փարամազ» մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար Վարդան եւ Թադէոս Քէօրօղլեան եղբայրներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան առթիւ Ս.Դ.Հ.Կ. Պաթօն Ռուժի «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի վարչութիւնը իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն՝ մասնաւորաբար Քէօրօղլեան եղբայրներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան առթիւ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը ցաւակցի հանգուցեալի բոլոր հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեաններին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրօղլեանին եւ Տէր եւ Տիկ. Թադէոս Քէօրօղլեանին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆի մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութիւնն ու անդամները իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ծովիկ եւ Վարդան Քէօրօղլեանին եւ համայն հարազատներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Ողբացեալ ԷԼԻԶԱՊԷԹ (ԷԼՕ) ԵԹԻՄԵԱՆի մահուան առթիւ, (Լիբանան) մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար ողբացեալի եղբայներուն Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գիրգորեանին եւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Գրիգորեանին:*

*«Մասիս»*

## ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

*Ծնեալ 1919ին Տէօրթիոլ՝ Թիւրքիա, Եղիսաբեթ Քէօրօղլեան եղած է դուստրը Տիգրան եւ Սրբուհի Քէօրօղլեաններու, եւ կրտսեր քոյրը՝ Յակոբին:*

*Մէկուկէս տարեկանին կորսնցնելէ ետք հայրը, փոխադրուած են Իսկենտերուն: Այդ տաժանելի կեանքի պարագաներուն տակ, Եղիսաբեթ բախտը ունեցած է յաճախելու Նուպարեան վարժարան, սորվելով հայերէն եւ ֆրանսերէն, որմով ինք միշտ հպարտացած է: Շատ գեղեցիկ ձայն ունենալուն, մանկութեան տարիներուն եղբօր հետ միասին երգած են եկեղեցւոյ երգչախումբին մէջ, յաճախ մեներգելով առանձին բաժինները:*

*Փոքր տարիքին ամուսնացած է Պետրոս Քէօրօղլեանի հետ եւ տեղափոխուած Գըրըխան: Իրեն համար յատուկ նշանակութիւն եւ պարծանք եղած է իր Քէօրօղլեանի զաւակ եւ Քէօրօղլեանի հարս ըլլալը, եւ նմանաւանդ երկուքին «Տէօրթիօլցի» ըլլալը: Տակաւին նոր հարս՝ գաղթի օրերուն ճաշարանի մը մէջ Եղիսաբեթի հօրեղբայրը ականջալուր կ'ըլլայ խօսակցութեան մը թէ թիւրք գինուորներ պիտի արեւանգեն Պետրոսի կինը, անոր գեղեցկութեան համար եւ այդ պատճառ կը դառնայ որ տարի մը չբոլորած Գըրըխանի մէջ, գիշերով զինք փախցնէին դէպի Հալէպ, նոյնիսկ ամուսնոյն բացակայութեան:*

*Պետրոս եւ Եղիսաբեթ ունեցած են վեց զաւակներ, որոնցմէ երեքը դժբախտաբար փոքր տարիքէն մահացած են: Ան բացառիկ սէր եւ գուրգուրանք ցուցաբերած է իր ներսիդին մնացեալ իր միւս երեք վերապրող զաւակներուն՝ Ալիսին, Վարդանին եւ Թադէոսին հանդէպ, զորս մեծցուցած է մեծ զոհողութիւններով, յաճախ զանոնք իր հետ կը տանէր աղօթքներու կամ իր հետեւած ձեւագիտութեան դասընթացքներուն: Միեւնոյն ժամանակ ան աջ բազուկն էր իր հօրեղբօր կնոջ՝ Կիւլիւզարի, թարգմանելով անոր Սբ. Գիրքը հայերէնէ թրքերէնի, որպէսզի հօրեղբօր կինը սորվի Աւետարանը եւ իր կարգին քարոզէ կրօնական հաւաքոյթներու ընթացքին:*

*1967ին ընտանեօք կը տեղափոխուին Լիբանան, եւ կարճ ժամանակէ մը ետք կը կորսնցնէ իր ամուսինը: Այս վաղահաս մահուան պատճառով կը հարկադրուի կատարել թէ մօր եւ թէ հօր պարտականութիւնները իր զաւակներուն հանդէպ:*

*Այս շրջանին Եղիսաբեթի երեք զաւակներն ալ կազմեցին իրենց ընտանեկան երջանիկ բոյները: Ալիսն ամուսնացած է Սարգիսի հետ, բախտաւորուելով երեք զաւակներով՝ Մարալ, Սիլվա եւ Ժաք: Թադէոսն ամուսնացաւ Նորայի հետ եւ բախտաւորուեցան երկու զաւակներով Լիզա եւ Փիթըր: Վարդանն ամուսնացաւ Ծովիկի հետ եւ ունեցան երեք մանչեր Փիէռ, Արթըր եւ Ռաֆֆի: Հանգուցեալի թոռներէն հինգը ամուսնանալով իրենց պարգեւեցին 10 ծոռեր:*

*Լիբանանեան քաղաքական պատերազմի բերումով Եղիսաբեթ կը հաստատուի Ամերիկա իր զաւակներուն քով, ուր ապրեցաւ ուրախ եւ հանդարտ կեանք մը: Իր առօրեան եղաւ շատ զբաղ, յաճախ ընդունեց հիւրեր, ներկայ եղաւ աղօթքներու եւ իր տան մէջ կազմակերպեց աղօթաժողովներ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ անդամուհի ըլլալով նիւթապէս եւ բարոյապէս օժանդակեց իր սիրելի եկեղեցիին բարեզարդումին եւ վերելքին:*

*Իր հանդարտ կեանքի վերջին շաբաթներուն անակնկալ կաթուածով մը փոխադրուեցաւ հիւանդանոց: Յուլիս 29ին յառաջացած տարիքին ան աւանդեց իր հոգին շրջապատուած իր զաւակներով, թոռներով, ծոռերով եւ հարազատներով:*

*Եթէ Եղիսաբեթ Քէօրօղլեանի կեանքին ակնարկ մը նետենք, պիտի տեսնենք որ մեր այս տխրութեան առընթեր ունինք նաեւ որոշ գոհունակութիւն մըն ալ: Արդարեւ ան ապրեցաւ ուրախ, հանգիստ եւ երկար կեանք մը, որուն աւարտին ունեցաւ երանելի մահ մը:*

*Եղաւ տիպար կին ամուսնոյն, նեցուկ կագնելով անոր իր գործի հարցերուն մէջ: Անոր զօրաւոր կամքը եւ կարողութիւնը ուժ եւ լաւատեսութիւն ներշնչած են շուրջիններուն: Իր կառավարելու եւ նախաձեռնելու յատկութիւնը միաբան պահած է ընդհանուր ընտանիքը, ան իր զաւակներուն մայր ըլլալու կողքին, մայր եղած է հարսերուն եւ փեսային: Սիրով լեցուն իր հոգին բաժնեկցած է նաեւ իր 8 թոռներուն եւ 10 ծոռերուն հետ:*

*Կռիւը չսիրելով համերաշխութեամբ ապրած է բոլորին հետ, սիրելով եւ երբեմն ալ հանդիմանելով՝ բայց միշտ գիտակցօրէն եւ ինքնուրոյն քաղաքականութեամբ:*

*Շատ բաներ սորվեցուցած է շուրջիններուն, մանաւանդ հարսերուն: Իր յատկութիւններէն մէկը եղած է ընտանիքներու եւ զոյգերու հարցերը լսելով՝ լուծում գնել եւ անոնց դժուարութիւնները հարթել:*

*Հակառակ անոր որ բարձր ուսում չէր ստացած, գիտակից էր եւ իմաստուն, եւ ունէր այդ առաւելութիւնը՝ հոգեբանօրէն թափանցելու շուրջիններուն հոգիներուն մէջ, հաշտեցնելու եւ ճար գտնելու անոնց նեղութիւններուն:*

*Այսօր մեր սիրելի մաման, 92 տարիներ ապրելէ ետք, հանգչեցաւ եւ իր վերջին ճամբորդութիւնը կը կատարէ ետքին ձգելով քաղցր յիշատակներ:*

*Ան շատ սիրեց մեզ, մենք ալ շատ սիրեցինք զինք: Հողը թեթեւ գայ վրան եւ մշտնչենական լոյս իր հոգիին:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Այու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու այն բոլոր կազմակերպութիւններուն, բարեկամներուն եւ ծանօթներուն, որոնք անձամբ, հեռաձայնով կամ նամակով իրենց վշտակցութիւնները յայտնեցին մեր սիրեցեալ մօր եւ հարազատին ԹԱԳՈՒՀԻ ԵԹԵՐԵԱՆի մահուան առթիւ, մխիթարելով մեզ եւ ամոքելով մեր մեծ վիշտը:*

**ԵԹԵՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ**


ARMENIAN INDEPENDENCE DAY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
20
FESTIVAL
Փառատօն
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
SUNDAY SEPTEMBER 18, 2011
VERDUGO PARK, GLENDALE
Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938